



ԵՐԻՒՈՒ

1969-Ա

ԱՆՇԻՐ

ՈՒԺԸ
ԻԵ ՏԱՐԻ

Յունուար


ԷՇՄԻԱԾԻՆ

Խ. 11. 256.

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՇՄԻԱԾԻՆ

Ա

1969



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

կ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը զերաշնորհ տ. Սիոն արքայիսկոպոս	3
Մանուկյանին՝ Եղիպատոսի հայոց հայրապետական պատվիրակ ճշանակելու մասին .	
Ամենայն Հայոց Հայրապետի այցելուրյունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հա-	
խաղան մեծարք պրե. Բագալ Մուռադյանին	5
ԽՄԲԱԿՐԱԿԱՆ.—Ժամանակի և կյանքի խորհուրդը	6
Ամանորի և Գրեկի երաշափառ և սուրբ Ծննդյան տոների առիվ Ամենայն Հայոց Մայրա-	
գոյն Պատրիարք և կարողիկոս, Խորի Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրա-	
պետի և Խոյր Եկեղեցիների հոգեու պետերի միջև փոխանակված ողջույնի հե-	
ռագրերն ու գրուրյունները	8
Ամանորի և Գրեկի երաշափառ և սուրբ Ծննդյան տոների առիվ Ամենայն Հայոց Մայրա-	
գոյն Պատրիարք և կարողիկոս, Խորի Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրա-	
պետի և Եվլիապետական Արքուների ու առաջնորդարանների միջև փոխանակված	
ողջույնի հեռագրերն ու գրուրյունները	11
Հանդիսավոր Սուրբ պատարագ Գրեկի երաշափառ և Ծննդյան տոնի առիրով Մայր տա-	
նարում	13
Հայրապետական հարող Գրեկի երաշափառ Ծննդյան տոնի առիվ Մայր տանարում	14
Ամանոր հոգեու նեմարանի հարկի առկ	17
ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒՅՑԱՆ—Խորեղածուր, տաներենոր տարվա սեմին և մաղրանեներ	19
Ս. Ստեփանոսի տոնը Մայր Արքուն	22
ՄԱՅՐ Ա.ԹՈՌՈՒՄԻՄ	24
ՍՎՅՈՒՌՔՈՒՄ	
Եկեղեցական լուսեր	
Անոնադրուրյուններ Երանակեմի Մրցոց Հակոբյանց տանարում	26
Արեղայական ձեռնադրուրյուն Փարիզում	27
Թեմական պատգամավորական ժողով Բովածեստում	27
Թեմեյան մշակուրային միուրյան «Հայկաշն» Ուզույան» գրական մրցանակա-	
րաշխուրյունը	28
Կարապետ Ղազարյանի ստեղծագործուրյունների ցուցանանդեսը Երևանում	30
Տ. ՄԵՍՐՈՊ Մ. ՎՐԴ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ—Օրմանյան ուղաբա պատմարան	32
Հայրենանվեր, հայրենաշունչ նարարապետը	42
Հանգիստ արժ. տ. Խորեն Տահանա Տեր-Հակոբյանի	47
Հանգիստ արժ. տ. Հարուրյուն Տահանա Հարուրյունյանի	47
Մի ճշուում	48
Մատենագիտուրյուն «Արարատ» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷԶՄԻԱՆԻՆ

«ԷԶՄԻԱՆԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական ՀՀ, Էջմիածն, Ռեդակցիա յարական «Էջմիածն».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 22/XI 1968 թ., Ստորագրված է տպագրության 16/I 1969 թ.
Տպագրական 8,12 մամուլ, թուղթ 60×84^{1/8}, պատվեր 794

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1969 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

Վեհափոխ ԵԽ Սրբազնագույն Կաթողիկոսի
Ամենամաս ՀԱՅՈՑ



ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՈՒԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵՇԱՀԱՐԳ ՊՐՆ. ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հունվարի 3-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն է տալիս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ պրն. Բադալ Մուրադյանին:

Հայոց Հայրապետի և Մինիստրների սովետի պրն. նախագահի միջև տեղի է ունենում սրտագին զրոյց՝ չերմ մթնոլորտում:

Զրոյցին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Կ. Դալլաքյանը:



Մանուկեան, որ Մեր հայրական ողջոյնը և օրինութիւնը բերելով, պիտի բաշխէ հոգևոր միսիթարութիւն՝ թեմական-եկեղեցական իշխանութիւններու, հոգևոր սպասաւորներու և հաւատացեալ ժողովուրդին, համաձայն Հայաստանեաց եկեղեցոյ կանոններուն և Զեր բարեխիսամ երկրի օրէնքներուն:

Գերաշնորհ տ. Սիոն արքեպիսկոպոս եկեղեցական իր աստիճանին բարձր թեղինակութեամբ և բազում տարիներու իր հանրայայտ եկեղեցանուէր վաստակով, վստահ ենք թէ իրօք նոր հոգևոր շունչ և լոյս պիտի բնուէ Զեր կրօնական-մշակութային կեանքըն ներս ու առաել պիտի ամրապնդէ Զեր մէջ սիրու և միութեան ոգին յաւրժական սուրբ Եջմիածնի օրինութեան ներքեւ, օգնելով Զեզ իր բարի յորդորներով և առաջնորդութեամբ, որպէսզի Եգիպտահայ թեմական-եկեղեցական կեանքը հոգևոր շինութեան համբուն վրայ յառաջադիմէ ու բարգաւաճի, Զեր թեմական ներքին կանոնադրութեան համաձայն:

Արդ, յուսալից սրտերով ընդունեցէք Մեր սրբազան պատուիրակը, շրոջապատեցէք զայն որդիական սիրով և ամէն կերպի Զեր կարելին ի գործ դրէք որպէսզի լիապէս յաջողութեամբ պասկոի իր առաքելութիւնը:

Այս ուրախ առթիւ, Մեր համելի պարտքը կը համարենք Մեր հայրապետական օրինութիւնը յղելու Զեր մեծ երկրին, փառապանծ ու պատմական Եգիպտոսին, անոր հայրենաշէն բարձր կառավարութեան և համայն արարագնուաթոփի ժողովուրդին, որուն խաղաղութեան, երջանկութեան ու փառքին համար Մենք և Մայր Աթոռ կը մնանք աղօթող:

Թող Աստուած անշարժ, մէկ ու անքածան պահպանէ Մեր սուրբ եկեղեցին: Թող Աստուած առատապէս բաշխէ իր ողորմութիւնը և իր օգնութիւնը Զեզի բոլորին, Զեր եկեղեցիներուն, մեր հարազատ հաւատացեալ հայ ժողովուրդին, որ յԵգիպտոս:


Որդիք Մեր սիրելի, «Մատիցուք ճշմարիտ սրտիք՝ լուրդեամբ հաւատոց, լուացեալ զարտսոն ի խնճէ չարեաց և մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան»: «Եւ զգուշացուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց» (Երք. Ժ 22—24):

Մէկ ու խաղաղութիւն Տեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ ամէն:

Տուալ կոնդակս ի 14-ը յունուարի
և ի տումարիս հայոց Ռուժը,
1969 փրկչական ամի,
ի մայրավանս սրբոյ Եջմիածնի:
ՀՄՐ. 653

ՄԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նույն բովանդակությամբ և նույն առիթով կոնդակներ ուղարկվեցին նաև Աղեքսան-Դքորայի, Սուդանի և Եթովպիայի հայոց ազգային-եկեղեցական իշխանություններին:




**ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՈՒԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊՐՆ. ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ**

Հունվարի 3-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն է տալիս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ պրն. Բադալ Մուրադյանին:

Հայոց Հայրապետի և Մինիստրների սովետի պրն. նախագահի միջև տեղի է ունենում սրտագիճ զրոյց՝ չերմ մթնոլորտում:

Զրոյցին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Կ. Դալլաքյանը:





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԽՈՐՃՈՒՐԴ

Ամանորի և Քրիստոսի հրաշափառ և Ծննդյան մեծ տոների առիթով Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Սրբազնագույն կաթողիկոսի անոնից Մայր Աթոռոյի պաշտամաթերթ «Էջմիածն» ամսագիրը պրոտագինը շնորհավորում է մայր հայրենիքի և սփյուռքի բոլվանդակ հայ ժողովրդի Նոր տարին և ս. Ծնննդը:

«Օրինեացի՝ պասկ տարու քաղցրութեան քոյ» (ասդմ. ԿԴ—12):

Հավերժի գիրկն անցավ իրադարձություններով հարուստ և մի տարի՝ 1968 թվականը, ողջ աշխարհի, մարդկության և նաև մեր ժողովրդի և մեր եկեղեցու համար:

Նոր տարի է, նոր կյանքի առավոտ:

Նոր գործունեության սկիզբ:

«Անցանեն ժամք և՝ առորք և՝ ամք, և մարդն յառաջադեմն Ակրտի» (Լուսաւորիչ, «Յաճախապատում»):

Մարդը գալիքի ճանապարհը բացող շահակիրն է և նրա մեծագույն ստեղծագործությունը, ժամանակի զաղափարն է, ժամանակի ապրումը: Ժամանակը հավերժական երթի ելած ստեղծագործ, կառուցող մարդու կենագրությունն է:

Սաղմոսերգուն իր փորձառությամբ շեշտում է կյանքի վաղանցիկ բնույթը և փառաբանում միայն Աստուծու հավատենականությունը: Մարդու կյանքի օրերը «ընդ առաւտու որպէս դապարի զուարձացին և ծաղկեսցին, ոնդ երեկոյս թարշամեսցին, չորացին և անկցին» (ասդմ. ԶԹ 6—7):

Ժամանակը իր անվերջ, մշտահոս ընթացքի մեջ մնում է անփոփոխ նոյն ու հավիտենական: Մարդն է, որ ժամանակի մեջ նորանում է ամեն տարի: Մարդու կնեմագոյն կոչումն է այդ ժամանակը լցնել իրմո՞վ, աստվածահան ու մարդասփական արի գործերով, խորը ու խորհուրդով: Այս իմաստով ժամանակը պատմելուների և նաև մարդու մտքի, սրտի որոնումների ու նվաճումների:

Մարդը աստվածային նախախնամության և փրկության ծրագրի մեջ կոչված է «առաել կեանքի»:

Անցնող ամեն մի տարի մարդուն մոտեցնում է տիեզերական կատարելության բարձունքին:

Քրիստոսի և Ծննդյան խորհրդով սկիզբը դրվեց մարդկության ազգի հոգեկան ու բարոյական կատարելության: Քրիստոս իր հրաշափառ Ծննդով ոչ միայն մարդուն խոստացավ «առաել կեանքը», «Ես եկի զի կեան ունիցիք և առաել ևս ունիցիք», այլ որպես «Ծանապարհ, Ծշմարտութիւն և Կեանք», մարդկությանը մոտեցրեց Աստծուն. «ոչ մեղիցեն, և ոչ կարացեն հարկանալ զոք ի լուինն արբութեան իմոյ, զի լցցի երկիր ամենայն գիտութեամբն Աստուծոյ» (Ես. ԺԱ. 9):

Հոգեկան, բարոյական և հավաքական ազգային վերանորոգություն, կենտականություն. ահա իմաստը նոր տարվա և Փրկչի և Ծննդյան:

Կրոնական տեսակետից նոր տարվա նշանակությունն է: Ե՛լ ավելի հառաջադիմել

մեր քրիստոնեական հավատքի, մտածողության ու կյանքին մեջ, ձգուել դեպի հոգեկան ու բարոյական կատարելությամ:

Ազգային-հայրենասիրական, տեսակետից նշանակում է Էլ ավելի զարգացում հավաքական ճիգերով, համայնական աշխատանքով, ազգային իդեալներով:

Անցնող տարին մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր վերածնած հայոց աշխարհի համար եղան լարված աշխատանքով, բարի պրդյունքներով հարուստ ու պատմական մի տարի:

Ազգային-եկեղեցական տեսակետից 1968 թվականը հիշատակելի տարի հանդիսացավ նրանուն, որ Հայաստանյաց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ու Էջմիածնի օրինության ներք, շարունակեց իր նախախնամական առաքելությունն ու դերը մեր ժողովրդի եկեղեցական, հոգևոր կյանքում:

Մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար 1968 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին Հայոց Հայրապետի ուղևորությունը արտասահման մեծ ու պատմական իրադարձություն հանդիսացավ, հոգևոր-եկեղեցական տեսակետից, միջեկեղեցական հանդիպուների մակարդակի վրա էկումենիկ ոգով և պետական շրջանակների մեջ:

Անցնող տարվա սեպտեմբերի 20-ին լրացավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը: Այս առթիվ հանուն ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահության «Պատվո հայու» շքանշանի տրվչությունը, Հայկ ՍՍՀ Գերագոյն սովետի նախագահի կողմից նորին Սրբության հանուն խաղաղության պաշտպանության և հայրենասիրական մեծ գործունեության համար, երախտագիտությամբ և սիրով լրոեց բովանդակ հայ ժողովրդի սիրությունը, Հայկ:

Անցնող տարին նոր հաջողություններով պատճեց մեր ժողովրդի առաջնաժամքը, մասնավոր հայրենի աշխարհում:

Մեր եկեղեցին և ազգն ամբողջ, վկայում է Վեհափառ Հայրապետը 1969 թվականի հունվարի 6-ին Մայր տաճարում խոսած իր հոգեշունչ քարոզի մեջ, «մոխիրներեն փյունիկի պես հառնած, իր մայր հողի վրա հաստատ քայլերով կը նեթանա իր նոր կյանքի ապահով ու լուսավոր ճամփով, օրենքոր աճելով, միշտ կառուցելով երգ ու ծաղիկով»:

Փառքերն անցյալի ներկան կոգեշնչեն, իսկ լուսավոր ներկան կյանք կուտա անցյալն:

Այս անցնող տարուն մեր մայր երկիրը, ժողովուրդը մեր մեկ սիրու մեկ հոգի, երկինք բարձրացուց հաղողության կորողը Սարդարարադի և կյանքի կոչեց հին Երերունին:

Հայ ժողովուրդը իր հայրենի սրբազն հողի վրա, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում, ազգային հպատության ամենաքննությունը զգացմունքներով նշեց իր հնագույն ուստանի՝ Երևան դարձած Երերունինի հիմնադրման 2750-ամյակը:

Արդարև, 1968 թվականին մեծ ու պատմական եղան մեր հայրենիքի և ժողովրդի նվաճումներու ու հաջողությունները: Մի տարի է աճեց, մեծացավ մեր ժողովուրդը ու առականացավ նրա ստեղծագործ նախրյան ոգին:

Այս մտածումների լուսի տակ սիրությի հայությունը նույնակա լցվել է եկեղեցաշնչն, կրթանվեր, մշակութային, հայրենասիրական սրտագին աշխատանքների:

Ինչպես իր մայր հողի վրա, նույնակա և սիրությի տարածքի վրա մեր ժողովուրդը իր հոգում գտնում է կենսունակության նոր ուժեր, և ս. Էջմիածնի օրինության ներք և հայրենական իր ապրումներով, իր լուսարադ ու հայրենակարու հոգին բացում նոր ժամանակների, նոր կյանքի ու պայծառ գալիքի:

Սիրությի հայությունն ու հայրենական ժողովուրդը նույն ազգային հավաքականության հարազար զավակներն են՝ տոգորված նոր կյանքի հոգեքանությամբ, նոր կյանք նախական ապրումներով և ապազան նկատմամբ նոր կյանքներով և ազգային նոր կյանքներով, հայ մենալու և հայ ապրելու սրտառուց վճռականությամբ:


Թող նոր տարին լինի բովանդակ աշխարհի և հայ ժողովրդի համար խաղաղության, բարօրության և համերաշխության տարի:

Թող 1969 թվականը ս. Էջմիածնի օրինության և հավերժական հովանու ներք, լինի հայ եկեղեցու համար հոգևոր, նոր վերապարտների, ազգային-եկեղեցական միասնության և համերաշխության տարի:

Եղիցի, եղիցի և եղիցի:

Ծնորհավոր նոր տարի:

Քրիստո ծնաւ և յայտնեցաւ:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ
ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ
ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
S. S. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՑ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՇԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Հոռմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, նորին Սրբություն
Պ.Վ.Վ.Ղ.Պ.Պ.Ի.Ն (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական պատրիարք, նորին Սրբություն
Ա.Թ.Ե.Ն.Ա.Գ.Ո.Ր.Ա.Ս.Ի.Ն (Ստամբուլ),
Մուկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, նորին Սրբություն
Ա.Լ.Ե.Ք.Ս.Ի.Ի.Ն (Մուկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, նորին Սրբություն
Կ.Ո.Ն.Ս.Ա.Ն.Տ.Ի.Ն.Ի.Ն (Ալեքսանդրիա),
Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, նորին Սրբություն
Ս.Բ.Ո.Ւ.Ն.Ա.Կ.Յ.Ո.Ւ.Ր.Ե.Ղ.Զ.-Ի.Ն (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց պատրիարք, նորին Սրբություն
Բ.Ե.Ն.Ե.Գ.Ի.Կ.Տ.Ո.Ս.Ի.Ն (Երուսաղեմ),
Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, նորին Սրբություն
Թ.Ե.Ո.Դ.Ո.Ս.Ի.Ո.Ս.Զ.-Ի.Ն (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, նորին Սրբություն
Մ.Ա.Ք.Ս.Ի.Մ.Ո.Ս.Ե.-Ի.Ն (Դամասկոս),
Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,
նորին Սրբություն Ի.Գ.Ն.Ա.Տ.Ի.Ո.Ս.Հ.Ա.Կ.Ո.Բ.Գ.-Ի.Ն (Դամասկոս),
Համայն Եթովպիայի պատրիարք, նորին Սրբություն
Բ.Ա.Ս.Ի.Լ.Ի.Ո.Ս.Ի.Ն (Աղիս-Աքերա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, նորին Սրբություն
Բ.Ա.Ս.Ի.Լ.Ի.Ո.Ս.Ո.Ի.Կ.Ե.Ն.Ա.-Ի.Ն (Կերալա),

**Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-Ի Ն (Թրիլիսի).**

**Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),**

**Բուղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),**

**Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՆ (Բեյրութ),**

**Քենտրոնական արքեպիսկոպոս, համալի Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),**

**Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),**

**Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՍԱՆԻՆ (Սերբիա),**

**Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ԴԱՄԻԱՆՈՍԻՆ (Տիրանա),**

**Վարչավայրի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՍՏԵՖԱՆԻՆ (Վարչավա),**

**Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),**

**Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՆ (Բեյրութ),**

**Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն
ՄԱԿՍԻՄՈՍԻՆ (Կիպրոս),**

**Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱՂԱՋԱՆՑԱՆԻՆ (Վատիկան),**

**Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. ԲԼԵՅԿԻՆ (Ժնև),**

**Սրբամուշան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՄՔԵՅՖ եպիսկոպոսին
(Նյու-Յորք),**

**Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),**

**Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),**

**Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),**

**Ֆրանչիսկան միաբանության կուսառող
Հ. ԼԻՆՈՒՄ ԿՈՊՈՒԵԼԼԻՆ (Երուսաղեմ),**

**ԱՄՆ-ում Քրիստոնի եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ,
Գերապատիվ հայր ՌՈՒԲԵՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),**

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ ՇԱՌՈՒՅՅՈՒՆ (Մոնակո),

**Միմիթարյան ովատի աքքահայր, Գերհարգելի հայր
Հ Մ Ա Յ Ա Կ վարդապետ Կ Ե Տ Ի Կ Յ Ա Ն Ի Ն (Վեհանուիկ),**

**Միմիթարյան ովատի աքքահայր, Գերապայծառ հայր
Մ Ե Ս Ր Ո Պ վարդապետ Հ Ա Պ Ո Զ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),
Վերապատվելի Հ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ե Լ Վ Ա Ծ Յ Ա Ն Ի Ն (Մարտել):**

Այսօր, երբ մեր Փրկչի սուրբ Ծննդյան շնորհները երկինքն կիշնեն երկիր՝ մեր օրերու աշխարհին, Մեր ջերմագին աղողքն է, որ ազգերը բոլոր և մարդիկ բոլոր, բանան իրենց հոգիները սիրո և խաղաղության լուսին, որ իրենց կրաշխվի աստվածային առաս ողորմությամբ:

Երանի, երանի այդ լուսը թափանցեր ամենուր և փարատեր խավարք խափաներ չարը և խորտակեր գործիքը պատերազմին:

Բարի մաղթանքներով կշնորհավորնենք Ձերդ Սորությունը մեզի շնորհված սուրբ տոներու առթիվ և հուսացայ սրտով, հոգին Ձեզի միացած կիառաբնենք պատգամը Բեթղեհեմի հրեշտակներուն՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս.


Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

ԾՆԹ.—Պատասխան հեռագրերը կտպագրվեն նաշորդ համարում:





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԺԱՓԱՌԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ
 ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
 ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
 S. S. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
 ԱԹՈՌՈՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
 ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՈՒ ՈՒ
 ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ
 S. S. ԽՈՐԵՆ Ա.-ին (Անդրիաս),
 ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
 S. ԵՂԻՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
 ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
 S. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
 ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԵՐԻՆ,
 ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Աստոծ ողորմությամբ, վերստին կանգնած նոր տարվա սեմին, կող-
 չունենք լուսափայլ հիշատակը Փրկչին մեր Քրիստոսի և Անոր Իշման տե-
 ղեն ի Հայաստան աշխարհ, ամենայն հայոց սուրբ Էջմիածնեն կրերենք հայ-
 րական օրհնություն և բյուր բարի մաղթանքներ Ձերդ Ամենապատվության,
 տիրախնամ թեմիդ հոգևոր դասուն, թեմական-եկեղեցական վարչությանց,
 պատվական անդամներուն և համայն հավատացյալ մեր զավակներուն:

Սուրբ Մհնդիան երկնառաք շնորհները սիրո և խաղաղության, թող իջնեն ու բաշխվին մեր օրերու խոռվահուզ աշխարհին և բոլոր մարդոց ու ժողովուրդներուն, ու նաև մեր փոքր ածուին, մեր սուրբ եկեղեցիին և ժողովուրդին՝ ի կատարումն մեր բոլորի ազնիվ ու արդար իշձերուն:

Խոնարհ և հուսացեալ սրտերով դեպի երկինք սևեռենք մեր հայացքը և քաղցրությամբ ընդունինք պատգամը Բեթղեհեմի հրեշտակմերու՝ «Փառք ի բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Խաղաղություն ընդ Ձեզ ամենեսին, որ եք ի Քրիստոս Հիսուս, ամեն:


Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

* * *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական ինսամակալության (Լիսաբոն), Արգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Էղնդրն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուուելսատուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ձեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

ԾԱՅ. —Պատասխան: Ռեռագրերը կտպագրվեն հաջորդ համարում:





ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՓՈԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ԾՆՍԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

1969 թ. հունվարի 6-ին՝ երկուշաբթի.—
Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ տոնվում է Փրկչի հրաշափառ և Ծննդյան տոնը:

Առավոտյան ժամերգությունից հետո, ժամը 11-ին, Մայր տաճարում և Ծննդյան պատարագը մատուցում է լուսարարապետ տ. Հայկազուն արք. Արքահամբանը:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, զանգերի ուրախ ու հանդիսավոր դղյանջի ներքո առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. Պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը, որին և իր մասնակցությունն է բերում նաև տաղանդավոր երգչութի Լուսինե Զաքարյանը. Խմբի մենակատարութին:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան Փրկչի և Ծննդյան խորհրդի մեծ ավետիսը տալու հայ եկեղեցուն, բովանդակ հայ ժողովրդին, իր ոգեշունչ քարոզի մեջ, որը

նոյն գիշեր ձայնափովում է Երևանի ուղիղայանից: Վեհափառ Հայրապետի ծընթանիքը տպած է ամսագրի սույն համարում (էջ 14):

Հայկար և պատարագի, պատարագին սրբազն հոր հանդիսադրությամբ կատարվում է Զրոբինյաց կարգը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության «Ի Յովհաննէ ի Յորդանան գետ»:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր շնորհավորություններ է ընդունում և Ծննդյան տոնի առիթով:

Ն. Ս. Օծությունը Վեհարանում օրհնում է ազգի ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովը դիմ՝ մաղթելով խաղաղություն աշխարհին, բարօրություն՝ հայրենյաց և ժողովրդին հայց:

Օրվա հանդիսությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանի»-ով:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:





**ՀԱՅՈՒԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՍԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ,
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

(1969 թ. հունվարի 6)

Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ ամեն:

Սուրբ գրական Արարատի մեր երկրեն, Սիածնաէջ մեր սրբազնատոք տաճարեն, Քրիստոսի հրաշապի Ծննդյան առիթով, ձեզի կուգանք, հավատացյալ զավակներ Մեր, որ ի Հայաստան և ի ափոյու աշխարհի: Ամեն նման ցնծալի առիթներով Մենք ձեզմով կմիսիթարվինք, ձեզմով կզորանանք, ձեզմով լավատես կդառնանք և ձեզի ամենուդ համար աղորք կկարդանք: Դուք, Մեր սիրելիներ, Մեր հարազատներ, դուք մեր կենդանի եկեղեցին եք, դուք մեր ապրող ու աճող ժողովորդն եք: Դուք հույս ու ապավենն եք և պարծանքը սուրբ Էջմիածնի և Հայոց Հայրապետի:

Արդ, բացեք ձեր սրտերը, ձեր հայու սրտերը և Փոկչի նշման սուրբ սեղաններեն ընդունեցեք Մեր բերած օրհնությունը և շնորհները մեր Տիրոջ՝ Քրիստոսի լուսաշող Ծննդյան և Աստվածահայտնության: Եվ հույսով հափշտակված դեպի երկինք հայեցեք՝ լսելու պատգամը Բեթղեհեմի հրեշտակներուն՝

«Փառք ի բարձուն Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանուրիւն»:

Ինչքա՞ն քաղցր կհնչե այս երգը, մեր օրերու մարդոց, ժողովուրդներուն բոլոր, որոնք դարերու ծարավը ունին՝ խաղաղ ու արդար կյանքի:

Դիտեցեք ձեր շուրջը, մոտն ու հեռուն, գրեթե ամեն տեղ՝ խոռվահուզ վիճակ, սպառնացող վտանգներ բազում և նույնիսկ մահափյուռ կրակ պատերազմի:

Փառք երկնքին պայծառ ու բարի, որ աշխարհին և մեզի ամենու այսօր կբաշխե հույսը խաղաղության, հույսը փրկության:

Արդ, զավակներ Մեր, երկինք հայեցեք, ձեր հոգիները երկինք դար-

ձուցեք, խաղաղության խոսքով գիրար ողջունեցեք, սիրո շաղախով եղայրներ եղեք:

Խաղաղություն, սեր՝ ահա խոսքերու ուկին և ինքը խոսքը, որ էր ի սկզբանե, զի Աստված սեր է և խաղաղության Աստված:

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» դարերու աղերսանքը եղավ մեր տաճակած ազգին ու եկեղեցին: Դարեր շարունակ հոշոտված աշխարհը Հայոց և համատակ ժողովուրդը մեր, պատմության թեմին վրա կանգնած, կենածանի վկաներն են անուր ողբերգությանց: Ու մտածել, թե մեր ազգի ողբերգության մեծագույնը, մեր օրերեն հազիկ հիտուն և ավելի տարիներ առաջ կատարվեցավ, 1915-ի սկ, անգութ տարին: Սուաշին ցեղասպանությունը՝ մեր ապրած դարուն:

Հայաստանյաց եկեղեցին և ամեն հայ մարդ ինչպէ՞ս հանդուրժեն նոր կրակ ու ավեր, նոր պատերազմներ, այն ալ հյուղեական ահարկու ուժի մեր դարաշրջանին:

Բոլոր ազգերը, բոլոր մարդիկ, մեր համանմերն են, մեր եղբայրները՝ իբրև որդիք միևնույն Արարշին: Այսօր Վիետնամի մեջ մեր արյունն է, որ կիոսի, մեզմն ամեն մեկու հոգին ու խոհի երակներեն:

Տեր Հիսուս Քրիստոս, սիրով քո հուր «Ճմին սրտերը քար» մեր օրերու մարդոց և փշրե քու աջովի ամենափրկիչ՝ պատերազմի գործիքը մահվան: Մենք չենք կամենար պատերազմ ոչ որի կողմեւ և ոչ որի դեմ: Նույնիսկ արդարությունը թող խաղաղությամբ ըլլա: Պետությունները ամեն՝

«Թող հալեցնեն իրենց սուրերը և հիգակները և շինեն խոփեր ու մասգաղներ, ոչ մեկ ազգ ուրիշ ազգի վրա թող սուր չբարձրացնե, և թող այլն ոչ ոք չուսանի հնարքը պատերազմին» (Եսայի Բ 4):

Այս է հավատամքը մանավանդ մեր եկեղեցիին և ազգին ամբողջ, որ իր մոխիրներեն փոխնիկի պես հառնած, իր մայր հողի վրա հաստատ քայլերով կընթանա իր նոր կյանքի ապահով ու լուսավոր ճամփով, օրեցօր աճերով, միշտ կառուցելով երգ ու ծաղիկով:

Իրավ է, մայր Հայաստանը իր վերածունդը կապրի: Տքնության, վերելիք ստեղծարար երթի նոր դարաշրջանն է հայոց պատմության:

Փառքերն անցյալի ներկան կոգեկոչեն, իսկ լուսավոր ներկան կյանք կու տա անցյալին: Այս անցնող տարուն մեր մայր երկիրը, ժողովուրդը մեր, մեկ սիրու, մեկ հոգի, երկինք բարձրացուց հաղթության կոթողը Սարդարադարձի և կյանքի կոչեց հիմն Էրերունին:

Ծխմարիտ է, այո՛, որ շատ դարեր առաջ հին Երերունին հիմքերը դրավ նոր Երևանին, բայց առավել ճշմարիտ է, որ նոր Երևանը իր մտքի հուռով, իր բազկի ուժով, երեք հազար տարի հետո, որոնեց, պեղեց և լուս աշխարի բերավ իր մեծ պատմության առաջին քարը:

Ով հայու սիրու ունի, կտևնեն այս ամենը, կզաք, կիրճվի և իր բարի ձեռքը կերկարե ամենայն հայոց ապագան կերտող իր հայաստանցի եղբոր՝ իբրև ընծան իր հայ հոգիին:

Մկրտիչ Պեղիկթաշլանի քնարեն կարծեք երկնքի հրեշտակներն է, որ կերգեն, պատգամ բերելով մեզի այս օրերուն, երբ մեր հայրենի ժողովուրդը մեծ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակը կստուախմբե:

«Երբ ալսոր Մայրն Հայաստան
Տեսնե զորդիս յուր քովե քով,
Սրտին խորունկ վերքն դաժան
Քաղցր արտասակ բուժին ցողով:

Մեկստեղ հոգնինք, մեկստեղ ցանենք,
Մեկստեղ թափին մեր քրտինքներ,
Լզմունձ բարյաց երեկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր:

Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկայի եղբայր անուն»;

Հայոց եկեղեցին և իր սպասավորները հայու սիրու ունին: Սուրբ Էջմիածինը ի հնուց անտի, հայրենական ոգիով լեցուն, եղած է հովիվ, եղած է դաստիարակ, եղած է պաշտպան հայրենյաց: Անկորնչելի փառքի տիտղոսն է այդ Մայր Աթոռին և Հայրապետներուն մեր լուսաբնակ:


Արարատ լեռան կողքին՝ պահակ, Աստված Էջմիածինը պարզեց հայուն:

Թող Տերը անսատան պահպանէ, խաղաղ, անվտանգ երկիրը մեր անընման, անուշն Հայատուն և վեմն ու աղբյուրը անոր հավատքին, անոր հոգիին, լուս խորանը սուրբ Էջմիածնի:

Սիրեցյալ որդիք Մեր, որ ի հայրենիս և որ ի հեռավոր հյուրընկալ ասիեր, սուրբ Ծննդյան ավետիսով, կողջունենք ու կօրհնենք զձեզ բոլորդ մաղթելով ամենուդ երշանիկ, անխոռվ երկար տարիներ, սիրով միաբան, մեր մայր եկեղեցվո սուրբ հովանիի ներքեւ:

Ընորմք և սէր և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, եղիցին ընդ ձեզ, այժմ և յաւետ. ամէն:





ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

1968 թվականի դեկտեմբերի 31. երեքամբի օր, և գիշեր՝ ամանորի:

Հոգևոր ճեմարանի հյուրընկալ հարկի տակ, ամանորական սեղանների շորջ, համախմբվում են մի անգամ ևս Մայր Աթոռի միաբանությունը, Գեր. հոգ. Խորիրդի, Վերասուութիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, ճեմարանի դասախոսներն ու ուսանողները, մայրավաճքի ղեկավար պաշտոնությունը, իրենց պարտքը կատարած աշխատանքի մարդկանց արդար խոնով և գոհունակությամբ միասին ճանապարհելու անցնող տարին, որը եղավ իրավես իրադարձություններով հարուստ տարի՝ Մայր Աթոռի, մայր հայրենիքի և բովանդակ հայ ժողովրդի համար, հոգևոր-եկեղեցական, մշակութային, հայունասիրական տեսակետից և վայ հոյսերով, երազանքներով և պայծառ լավատեսությամբ ողջունելու նոր տարին, որը բացվում է մեր առաջ որպես նոր կանքի սպիտակ մատյան:

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը մուտք է գործում ճեմարանի հանդիսությանց սրահը, ուրախ ծափահարությունների, երախտագետ ծպիտների ու սրտառուց բարեմանությունների մեջու, հախագահելու ամանորական ավանդական սեղանին:

Հայոց Հայրապետը ուրախ տրամադրությամբ օրինում է Մայր Աթոռի բարիքներով զարդարված նոր տարվա սեղանը, որի շորջ ստեղծվում է ամանորի հասուու խոհերով, մտորումներով օծուն, վանական չերմիկ մթուղորտ:

«Յանկանալով ցանկացայ ուտել զջատիկըն աշակերտօրս հանձերձ»:

Հանդիսության սկզբում հոտընկայս ունկընդունում է Տերունական աղոթքը և Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվազը:

Ամանորին նվիրված երեկովոյթ բանալով հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողապայյանը նշում է, թե ինչքան քայլու ու ներշնչող է ապահը, երբ մի անգամ ևս Հայոց Հայրապետի օրինաբեր ներկայությամբ հավաքված Մայր Աթոռի միաբանությունը ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, վաճի պաշտոններուն, հոգևորական թե աշխարհական, գոհունակությամբ հրաժեշտ են տալիս անցնող տարվան և միասիրու ու միակամ, սրտագիտ երախտագիտությամբ լցված դեպի համազգային այս սուրբ հաստատությունը, որ ամենայն հայոց Մայր Աթոռ և ս. Էջմիածինն է, դիմապիրում՝ նոր տարին:

Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկագուն արքեպիսկոպոսը, արտահայտելով բոյլ ներկաների խոներն ու երախտագիտական գգացմունքները, առաջարկում է բաժակ բարձրացնել Մայր Աթոռ և. Էջմիածինի անսասանության, պայծառության և նոր արժանավոր գահակալ՝ Հայոց Հայրապետի թանկագին կենաց արևատության և նոս եկեղեցանվեր, հալունաշեն գործերի հաջողության համար:

Սրտագին բարեմանալություններին ձայնակցում է ճեմարանի երգչախումբը հինգնենելով վեհ և հանդիսավոր Մայր Աթոռի հիմնը՝ «Եղ միածինն ի հօրէ» շարականը:

Ն. Ա. Օծությունը խորապես հոգված ու բարձր տրամադրությամբ, նոր տարվա խոհերով, մտորումներով համակված նր օրինությունն ու ամառորական պատգամն է տալիս բոլոր ներկաներին, շեշտեղով, որ Հայաստանյաց առաքելական եկեղեցին Մայր Արթոռ և Էջմիածնի հովանու ներքո, իր աստվածատոր, հոգևոր հայրենափառական առաքելությունը կատարի հայ ժողովրդի ծոցում, թե՛ Մայր հայրենիքի մեջ և թե՛ ափյուղի բոլոր տարածի վրա, մեր սրբազն համեմեների ոգով և ներշնչումով, բովանդակ հայության գերագույն շահերի գիտակցությամբ։ Հայոց Հայրապետը Նր ոգևորիչ պատգամի վերջում սրտագին բարեմաղթություններ է անում հայ եկեղեցու պայծառության, մայր հայրենիքի և բովանդակ հայ ժողովրդի բարորության համար, գալիք պայծառ օրերի հեռանկարներով խանրավառ։

Ամանորի սեղանների շորջ ստեղծված խանրավառությունը ավելացնում էն հոգևոր ճեմարանի սաները, իրենց երգերով ու արտասանություններով։

Ճեմարանի երգչախոսությունը, երաժշտության դասատու Խորեն Մելիսանեցյանի ղեկավառությամբ, կատարում է «Սեղանն է առատ», «Կաղանդի երգ», «Կենաց երգ», «Հայոց գիճի», «Գարուն Երևան», «Խումար պալկե», «Այ Ֆորկա», «Երերունի» խմբերեր։ Գ լարանի ուսանող Հովհաննես սրկ. Գովզյանը արտասանում է Սիմեոն Երևանցու «Նոր տարի»-ն, նույն լարանից Հակոբ սրկ. Նայքանյանը՝ Արամ Արմանի «Գաղեկ հայրենի ձմռան մասին»-ը, Ա. լարանցի Տիգրան Սահակյանը Գեղամ Սարյանի «Մալթանք նոր տարվա առթիվ», նույն լարանից Խաչիկ Խաչատրյանը՝ Ս. Վահովյանը՝ «Ծաղկանից»-ով և Արրահամ սրկ. Մարգարյանը՝ «Էջմիածն» ժողովրդական տառը։

Գ լարանի ուսանողներ Հովհաննես և Արարատ սարկավագները դաշնամորի վրա նվազում և երգում են Ա. Բաղդասարյանի «Գայանե»-ն, Բ լարանցի Վարդան Տեղլերյանը՝ Հեղերի «14-րդ Հունուր»-ը, Գ դաստիանցի Հակոբ Քյովիկեանը՝ տասշին վալը, Ա. լարանցի Արտաշեան Մոշենյանը՝ Չալենյանու «Հիւլանդ Պուպրիկը», Ա. լարանցի Խաչիկ Խաչատրյանը՝ Ա. Խաչատրյանի «Ամստանտիհնա», և Ա դաստիանցի Ավետիսի Արթինյանը՝ Բեթհովենի «Սոնատան»։


Հանդիսության ընթացքում ուսանողության ուղղած և նոր տարվա խոհերով համակված հովանից ու ջերմ երություններ են ուսեռում ճեմարանի դասխոսներ Ա. Հատիսյանը, Գր. Գյուլյանը, Պ. Շահրազյանը, Ս. Անթովյանը, Ա. Հովհաննեսը։

Մի պահ հանգչում են դահլիճի լուսերը, մոմերի դժգույն ու պլավացող նշովվերի ներքո մի խումբ ուսանողներ կատարում են ծննդյան երգեր՝ «Ընորհուրդ մեծ և պանչելի», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» և օտար լեզուներով ծննդյան այլ մեղեդիներ, Փրկչի Աստվածահայտնության և Ծննդյան մեծ խորհրդի բերկրանքը բաշխելով բոլոր ներկաներին։

Ավելի ուշ, ընդհանուր խանդավառության և ուրախության մեջ, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. Վաղրամայեսոր սրամիտ ու դիպու «կաղանդեք»-եր է բաժանում միաբանությանը և դասախոսներին հաջող ու համեղ բնութագրումներով։

Գիշերվա ժամը 28-ին, խմբվին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով պալարտվում է նոր տարվան նիկոված հանդիսությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ։

Ընորհավոր նոր տարի։



ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ

(Դասախոս Բոգենոր Շեմարակի)

ԽՈՌՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՍԵՄԻՆ ԵՎ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ*

Դեկտեմբերի 31-ի այս գիշերը, Կաղանդի գիշերը, մենք կանգնած ենք հին ու նոր տարիների սահմանագլուխն: Այս գիշեր մի տարի ևս պոկվելով մեր կյանքից՝ միանում է հավիտենության, կամ, հակադարձարար, մենք ինքներս ենք մի տարով մոտենում հավիտենության:

Հավիտենությունը ժամանակն է, որ ժամանակը Անձանոթի գոյության ձևն է՝ անընլիքը, անվախճան:

Մարդ իր գոյությամբ, իր հարատև ստեղծագործությամբ վկայում է Անձանոթի փառքը, որովհետև Անձանոթը բնակվում է մարդու մեջ, գործում է մարդու միջոցով, և մարդու բացահայտումով՝ փառակորվում է: Առանց հավատքի օգնության՝ փակ է ճամփան, խավարը՝ անթափանց, որովհետև խիստ սահմանափակ են մեր գիտելիքները, և օվկիանոսի համեմատությամբ՝ նրանց հանված մի կարիք չըի չափ անգամ չկան: Այնքան անհոն է Անձանոթն իր հարափոփոխությունը, իր այլազան փոխակերպումներով:

Ամեն կողմից, ամեն ռոպե, ամեն քայլափոխին, տիկորության թե ուրախության ժամին, միդու թե ատելության մեջ, խիզախումների թե նահանջի պահին՝ մենք գգում ենք Անձանոթի անտեսաների ներկայությունը: Նա է որոշում, նա է գգում մեր գոյության ճանապարհը:

Այս գիշեր քաղաքակիրթ մարդկությունն ամբողջ առանձին ուրախ և եղանակների շուրջ համախմբված՝ տոնում է նոր տարին: Նոր տարին անվախճան ժամանակի և վերանորդվող կյանքի խորհրդանշին է: Մեր այսօրը երեկի շարունակությունն է, ինչպես մեր վաղը՝ մեր այսօրի շարունակությունը:

* Խոսված դեկտեմբերի 31-ի գիշերը, Ամանորի մեղանի շուրջ:

Ինչպես մեր այսօրը նման չէ մեր երեկին՝ այնպես էլ մեր վաղը նման չի լինելու մեր այսօրին: Այս միանմանության և այս բազմազանության մեջ է ամբողջ կյանքի խորհուրդն ու իմաստը: Ժամանակն ինքն իր մեջ՝ միանալան է, անբաժան, անտրոհելի: Փոփոխական է միայն մարդը, կյակի, առանձին անհատ մարդը: Բայց անփոփոխ է մարդկությունը, այն, որ հավիտենական է, այն, որ ժամանակի բանձրացյալ արտահայտությունն է և նրա հմաստավորումը միաժամանակ: Ժամանակը, իր անվախճան հոսանությ մեջ, մնում է անփոփոխ: Փոխվում է միայն մարդը. փոխվում է հովզերով, ապրումներով, մտորումներով, փոխվում է ցանկություններով, երազաքրով, խիզախումներով, տեսիլքով: Եվ մարդու այս անընդմեջ փոփոխությունը անվախճան ժամանակի հարատացումն է խորությամբ և պանծացում՝ մակերեսով:

Փոփոխվող, վերջացող ու վերսկսղ կյանքի տոնն է նոր տարին: Այս է պատճառը, որ նոր տարվա սեղանը միան ու միայն ուրախության սեղան է, որովհետև եթե անցնում է մասնակին, մնում է ընդհանուրը, եթե անցնում է մարդը, մնում է մարդկությունը, որն հարստանում, ճնշանում է իր մեջ ընդուներով ամեն մի անցնող մարդ հովզերի, մտորումների և իրագործումների ամբողջ հարստությունը:

Ո՞րն է արդյոք այն իմաստը, որ մարդը ծրաբել է նոր տարվա խորհրդի մեջ: Նոր տարվա խորհրդը, իմ կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ ծանոթի և անձանոթի հավիտենական կամքումը՝ կյանքի հարատևման միակ նախապայմանն ու ամենահզոր գործոնը:

Ծանոթը ավարտված գործն է՝ իր կենահիութը պառած ստեղծագործություն, որն անվախճան ժամանակի մեջ մնում է որպես

հյութական բարիք և իրողություն, որպես իրավիճ ապացույցը այն բանի, որն այլև չի կարող կրկնվել:

Նոր տարվա սեմին, դեռ ներս շմտած, մարդիկ սովորաբար հետադարձ մի հայացքով չափում են իրենց անցած ուղին, հանրագումարի բերում իրենց կյանքի փորձը: Եվ այսուել ահա, մին ու նոր տարիների սահմանագլխին, ծանոթի և անծանոթի բախումից, հակասությունների միասնությունից՝ մեր հովզերից ու հույսերից, մեր արցունքից ու ծիծաղից, մեր տիտուր ու բարի վերիշումներից հյուսվում է մեր կյանքի երգը: Երգով ենք մենք մեզանից հեռացնում ծանոթը և մոլեգին ոստումով անցնում նոր տարվա սահմանը: Սահմանից անդին Անծանոթն է՝ իր հավիտենական կանչով, իր անդադրում հրավերով:

Նոր տարվա սեմին մենք ձևակերպում ենք մալթանքներ, բարեմաղյություններ, ցանկություններ, երազանքներ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ Անծանոթի կանչին ու հրամերին տրված պատասխաններ: Անծանոթի հպումից՝ մանուկը ժպտում է, ցեծագին ծափ է տալիս և, զգեստավորված իր անմեղությամբ, ովք ծափից կախված հրաշալի խաղալիքներ է երազու: Անծանոթի հաճախանքը հրդեհում է երաժշտի ներքին տեսողությունը և կախարդական հնչյուններով դաշնավորում է նրա սրտի ու հոգու ելեւթերը: Անծանոթի թելադրանքով՝ բանաւելծական չափատողերի մեջ՝ անձն, անգոյն քասուից Զնն է կաղապարում բանաւելծը՝ կյանքի ներդաշնակությունը անձնելով ծարաված հոգիների անդաստանի վրա: Անծանոթի ցուցումով՝ լուսավոր պողոտաներ, երկնարան շենքեր է երազում ճարտարապետոր, անհնարին սխրանքների մասին է մոտածում հերոսը, գյուտարարը. նոր հախագծումներ է անում պետական գործիքը, ներանուշ տեսիլքով է լաստավարում հոգուրդականը: Եվ այսպես ահա բոլորը, մեծ թե փոքր, տեր թե ծառա, իշխան թե ուսիկ նոր տարվա սեմին լցվում, թեղմանորմում, անում և հզորանում են Անծանոթի ամենակարող զորությամբ:

Ահա այս է, իմ կարծիքով, որ կազմում է նոր տարվա խորհրդորոր: Նոր տարվա ամռողջ հմայքը, խորհրդորոր պայմանավորված է Անծանոթի կախարդանքով: Անծանոթն է ան ստեղծարար սկիզբը, որտեղից մնվում է մեր կենդանությունը, որտեղից վկայում է մեր գոլության իմաստափորման և տարագուման հրաշապատում դյուցազնագիրքո: Եվ անծանոթը աղ անունով կոչվում է Աստված, որին վկայելու և փառակորելու համար ստեղծված է մարդք՝ ողջ բնության

և ատեղծագործության թագմ ու պարծանքը: Նոր տարվա այս որպիս սեղանի շուրջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, համախմբված են այս սուրբ հաստատության Բոգենրաման և աշխարհական աշխատողները: Նոր տարին ինչպես ուստի վերանորոգման, այնպես էլ աշխատանքային ծրագրերի նպագծման օր է: Կյանքը առաջ չի շարժվում միայն մեծ խորքերով, մեծ նախագծուներով: Բավկական է, որ մեզանից ամեն մեկը գիտակցի իր տեղու ու դերը հասարակության մեջ և ըստ այնմ էլ գործի. անպայման գործերը լավ կը նույնական: Մեր գործունեության ողորությունը սուրբ Էջմիածինն է, որի պայծառության համար կոչված ենք աշխատելու մենք բոլորս:

Իսկ ի՞նչ է սուրբ Էջմիածինը:

Սուրբ Էջմիածինը մեր ժողովրդի հոգեկան թագավորության անառիկ միջնաբերդն է: Այսօր ոչ մեր արքաները կան և ոչ էլ նրանց արքայական պալատները: Այսօր ոչ մեր իշխանները կան և ոչ էլ նրանց իշխանական ապարանքները: Բայց կա սուրբ Էջմիածինը իյ գահակալով. կան մեր ոգու ամրոցները՝ մեր սքանչելի տաճարները: Ինչո՞ւ բացատրել այս երևույթը: Պատահականությամբ արդյոք: Ո՞չ, կյանքում պատհականություններ չկան: Կյանքում ամեն ինչ ունի իր ներքին տրամարանություններ: Աւսոր սուրբ Էջմիածինը կա, որովհետև մեր ժողովրդը այն կառուցել է իր նոգու նմանությամբ, իր հոգու վեմի վրա, նրա մեջ խուացրել է այն ամենալավը ու ամենավսեմը, որ նա տեսել, ընկալել, ըմբռնել և իմաստվորել է կյանքում: Սիալվում են բոլոր նրանք, ովքեր պատմությունն նույնազնում են դեպքերի ու թվականների պատմության հետ: Մարդը ի սկզբանե աստված չէ, բայց նա իր ստեղծագործությամբ աստվածանում է, իր եռությամբ խորխորաններից վեր է խոյանում դեպի իր հոգու կատարները, այն տեղից զԱստված տեսնելով՝ նրան նմանվելու համար: Խսկական պատմությունը՝ մարդու աս աստվածանման ոնթաօքի հակեանացումն է: Այս տեսակեւտից սուրբ Էջմիածին պատմությունը՝ աստրոդական պատմությունը մեր ժողովրդի աստմությունն իսկ է, իր արտահատության ամենավսեմ ծնի մեջ: Այս սուրբ տաճարը, ռարեկեն այս հուակապ կառուցը մեր աշքին անենութանում է, իր խորհրդություն է մեր ամրող պատմությունը՝ դարուու նուա օստեներակի ասենաթիմանան տարուին: Անոռ Էջմիածինը մեր աշրին ունակ ծամու ան տանեն սահուուին է, որից բարձրանաւալով մենք զԱստ-

ված ենք տեսնում: Ահա այս է սուրբ Եջմիածինը ամեն մի ճշմարիտ հայի համար:

Ծնորհավոր Ձեր նոր տարին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, մեր պատմական սուրբ Ալոռի արժանընտիր գահակալ: Սուրբ Եջմիածինը իր խորհրդով ոգեշնչում և պարտավորեցնում է Ձեզ. Ձեզ առանձնացնում, վեր է բարձրացնում սովորական մահկանացուներից: Դուք այսօր պատմություն եք և պատմության շարժիչ ուժերից մեկը: Դուք այսօր այն միակ համարհայկական անձնավորությունն եք, որի մեջ մարմնավորվում է մեր ծողովորի բարոյական միասնության խորհրդանշից: Սուրբ է Եջմիածինը, սուրբ է հրայ գահակալը:

Ծնորհավոր Ձեր նոր տարին, ով հավատքի որդիներ, մեր ազգի ու եկեղեցու ծառապության կոչված մատաղահան հոգիներ: Ձեր կոչումի գիտակցության մետ ունեցեք հան ձեր կոչման հապարտությունը: ԶԱստված կարելի է ճանաչել միայն հոգու բացարձակ անմեղությամբ, սիրո ներանուշ ուժով, համափյուն բարության շողարձակումով: Անտարքերությունը շարի նկատմամբ հավասարագոր է մեղսակցության: Պետք է խափանել շարր, հպատել բարու հաղթանակին: Հավատացեք Աստծուն, հավատացեք մարդուն, և վկայեցեք վկայեցեք հանուն սիրո, հանուն արդարության, հանուն վերանորոգվող կանքի հավիտենական ճշմարտության: Թող սերը առաջնորդի ձեզ, խոնարհությունը բարձրացնի ձեզ, ծառապության ոգին վարձատիր ձեզ: Եթե դժվար է հայ լինել, բայց պատվի գործ է հայ լինել: Ուր էլ լինեք, միշտ բարձր պա-

հեցեք մեր ծողովորի արժանապատվությունը: Աստամենով պաշտպանեցեք մեր լեզուն, բարձր, գեղեցիկ, վայելու հնչեցրեք այն: Եթե երբեմն վհատություն իշնի ձեր հոգիներին, հիշեցեք այս սունը, հիշեցեք աստվածահաստատ սուրբ Եջմիածինը: Հիշեցեք ձեր փառավոր, աստվածախոս նախնիներին, ոգեշնչվեցեք նրանց օրինակով, զոտեպնդվեցեք նրանց հավատքով: Մեր ծողովորդը հավատքի ծողովորդ է, ունի տեսիլք, հղացք ու սլացք: Դուք տեսաք դրանց ապացուցները, դուք տեսաք Հոկտիսինեն, Հաղպատն ու Սանահինը: Դուք ամեն օր տեսնում եք սուրբ Եջմիածինի երկնապաց կաթողիկեն: Մոռացեք ճամիճը: Մի խոնարհվեք որիշ կուռքերի առաջ: Նայեցեք վերև. դիտեցեք մեր եկեղեցիների սրածայր կաթողիկեները: Նրանք ձեզ ցուց կտան երկնքի ճանապարհը:

Ծնորհավոր Ձեր նոր տարին, սրբազն հայրե, բարեշնորի սարկավագներ, դասախոս ընկերներ, աշխատակից եղբայրներ: Թող սկավող նոր տարին ձեզ բերի երշանկությունն, ձեր ազնվագուն հինձերի, երազանքների իրագործում: Թող սկավող նոր տարին լինի մեր հայրենի կառավարության, մեր հարազատ ծողովորի հոգրացման, ստեղծագործ աշխատանքի, խաղաղության և երշանկության տարի: Թող սկավող նոր տարին լինի հայրենի հողի վրա, հայ պետության, հայ եկեղեցու հովանու ներքը՝ մեր բազմաչաշար, աշխարհասիյուն հայ ծողովորի տունարձի, համախմբման և ամրողացման տարի:





Ա. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի, դեկտեմբերի 24-ին, երկու շաբթի օրը, Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ ճշվեց նախավկա և առաջին մարտիրոս և Ստեփանոսի տոնը, որը տոնն է Հայ Մայր Աթոռի սարկավագների և հոգևոր ճեմարանի սաների:

Այս որակի տոնի առջիկ Մայր տաճարում կատարվեցին շնորհարաշխություններ երեկոյան ժամերգություններ հետո: Երեքշաբթի օրը, դեկտեմբերի 23-ին, ողջ միաբանությունն ու հոգևոր ճեմարանի սաները մասնակցում են նախատնակի հանդիսությանը, որը կատարվում է տաճարի հյուսիսային թևին գտնվող և Ստեփանոսի խորանի առջև:

Հավարտ նախատնակի արարողության, հոգևոր ճեմարանի տեսչության միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտսնությամբ Բ լարանի կրկու ուսանողներին՝ Ղազարոս Կյուրեղյանին և Վարդան Տեղերյանին տրվում է կիսասարկավագության աստիճան ձեռամբ Մայր տաճարի լուսարարական տ. Հայկազոն արքեպ. Արքահմբանի:

Ապա որար կրկու իրավունք է շնորհվում Ա լարանի Յ աներին՝ Խաչիկ Խաչատրյանին, Ժիրայր Սիմոնյանին, Կոտրին Ներսիսյանին, Տիգրան Սահմանականին, Տըրդատ Շամբանին և Արտաշես Մուշեղյանին: Դարդության չորս աստիճանն է շնորհվում Գ րասարանի ուսանողներին՝ Հակոբ Խաչատրյանին, Հակոբ Քյուփելյանին, Մնացա-

կան Մողկյանին, Պետրոս Վարդանյանին և Նշան Մանուկյանին:

Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, սկսվում է ժամերգությունը՝ ներկայությամբ ողջ միաբանության, հոգևոր ճեմարանի ուսանողության, դասախոսական կազմի, Մայր Աթոռի պաշտոնեության և բազմաթիվ հավատացյալների:

Մայր տաճարի կամարների տակ այնքան հարազատությամբ և հոգականությամբ են հնչում օրվա խորհուրդին նվիրված շարականներն ու մեղեղիները՝ «Նախատակ բարի Քրիստոսի», «Այսօր Դասք»-ը, «Ընդ երկնալնոց»-ը:

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ Մայր Աթոռի 12 սարկավագները սաղավարտ ի գույն, բորվալներով ու տապանակներով, զույգ-զույգ դրույ են գալիս ավանդատնեց և ըստ ավագության շարվում և Ստեփանոսի խորանի առաջ:

Առավոտյան եկեղեցական հանդիսավոր արարողության վերջին պահն է, սարկավագները տպավորիչ և ներդաշնակ երգում են Մանկունքը՝ «Նախասարկավագ և առաջին մարտիրոս» և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» տաղը, դրոնցով և ավարտվում է արարողությունը:

Ժամը 10-ին սկսվում է հանդիսավոր ս. պատարագը: Պատարագում է տ. Հայկազոն արքեպիսկոպոսը, որը և կատարում է սարկավագական ձեռնադրությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. Վրդ. Պողապալյանը: Մայր տաճարի խնձաբոյք կամարների տակ գեղեցիկ է հնչում «Աստվածային և երկնային շնորհ» տաղը: Հավարտ ձեռնադրության արարողության, սրբազն հայրը իր գեղեցիկ քարոզի մեջ ոգեշնչում է նախասարկավագ ս. Ստեփանոսի ս. Հովհաննելը, նրան ներկայացնում է որպես «այր հօր, ի հաւատով և ճշմարտութեամբ», որպես նվիրումի և զոհողության մարմնացում, և ապա թելադրում է Մայր Աթոռի ավագ ու կրտսեր սարկավագներին՝ վառ պահել ս. Ստեփանոսի քրիստոնեական ոգին ու հավատքը: Սրբազնը իր քարոզի վերջում, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհավորում է նորընծա սարկավագների ձեռնադրությունը և սարկավագների տոնը՝ մայթելով, որ նրանք լինեն ճշմարիտ «մշակր առանց ամօթյոյ»:

Ս. պատարագը երգվում է հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ՝ դեկավարությամբ եկեղեցական երաժշտության ուսուցիչ Հ. Ֆուրունեցյանի:

Ժամը 3-ին ճեմարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների: Սեղանը նախագահում էր լուսարարապետ տ. Հայկագործ արքեպ. Աքրահամբանը: Շաշին ներկա էին միաբանությունը, ուսանողությունը, դասախոսական կազմը:

Շաշկերույթի ժամանակ առաջինը խոր է առնում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. Վարդապետը և շնորհավորում սարկավագների տոնը՝ մայթելով նրանց հաջողություն հետագա գործերում և հաստատամբություն իրենց նոր ընտրած ասպարե-

զում: Խոր է առնում նաև հոգևոր ճեմարանի ավագ դասախոս Ս. Հատիսյանը, ինչպես նաև դասախոսներ Գ. Գյուլյանը, Ս. Անթոնյանը, որոնք գեղեցիկ ու խրախուսի խոսքերով շնորհավորում են սարկավագներին:

Ս. Ստեփանոսի և առաջին մարտիրոսին նվիրված տոնը Մայր Աթոռում ավարտվում է՝ անհուն ուրախությամբ լցնելով ճեմարանականների մատադ սրտերը:

Չորեքշարթի, դեկտեմբերի 25-ին, երեկոյան ժամերգությունից հետո, երկու նորընծա սարկավագները, գլխավորությամբ տեսչի, ներկայացնում են Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրինությունը ստանալու համար: Ն. Ս. Օծությունը սիրով է ընդունում իր հոգևոր զավակներին, խրատում է նրանց՝ լինել ս. Ստեփանոսի նման հավատարիմ սարկավագներ Աստուծո սուրբ սեղանին, և օրինում է նրանց ուխտը:

Երախտագիտական ու շնորհակալական սրտագիտ խոսքեր են արտասանում նորընծա սարկավագները Վեհափառ Հայրապետին:

1. Բարեգնորի Ղազարոս սրկ. Կյուրեղյանը ծնվել է Նիկողյանում, 1948 թվականին: Ավարտելով վեցամյա կրթությունը Նիկողյան Մելիքյան-Ուզունյան վարժարանը, 1962 թվականին ընտանիքով ներգաղթում են հայուններ և հաստատվում Կիրովականում: 1964 թվականին դնդունչում է հոգևոր ճեմարան:

2. Բարեգնորի Վարդան սրկ. Տեղեկյանը ծնվել է Դամակեսում, 1950 թվականին: Ավարտելով 1964 թվականին ազգային վարժարանը, 1965 թվականին ընդունվում է հոգևոր ճեմարան:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին՝ կիրակի. — Բ. կիրակի յինանց.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը և քարոզեց «Գնացէք այսուհետև, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ Մալաքիա արքեպ. Օրմանյանի մահվան 50-ամյակի։

Վեհափառ Հայրապետը քարոզեց տ. Մալաքիա արքեպիսկոպոսի կյանքի ու գործունեության մասին, որպես տիպար բազմահուս և վաստակավոր մտավորականի և հոգեորականի։

* * *

Դեկտեմբերի 8-ին՝ կիրակի. — Գ կիրակի յինանց.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

* * *

Դեկտեմբերի 13-ին՝ չորեքշաբթի. — Այսօր երեկոյան որպես ուխտավոր Մայր Աթոռ ժամնեց բուզար եկեղեցու հոգևորական տ. Գորազդ վարդապետը, որը եղավ հյուրը Մայր Աթոռի մշաբանության։

Հայր Գորազդը ծանոթացավ մայրաքաղաքի եկեղեցիներին, տեսարժան վայրերին և դասախոսություն կարդաց հոգևոր ճեմարանում՝ բուզար եկեղեցու կազմավորման և նվիրապետության հաստատման մասին։

Տ. Գորազդ վարդապետը Մայր Աթոռից մեկնեց դեկտեմբերի 21-ին, շաբաթ օրը։

* * *

Դեկտեմբերի 15-ին՝ կիրակի. — Դ կիրակի իինանց.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Փարիզի հայրապետական պատվիրակի փոխանորդ հոգ. տ. Գյուտ ծ. վրդ. Նագաշյանը, որը ուստավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 16-ին՝ Երկուշաբթի. — Կեսօրից հետո, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Անթոսյանը կարդաց դասախոսություն, ի ներկայության ճեմարանի ուսանողության և Մայր Աթոռի միաբանության, «Միջազգային լեզվի ստեղծման հարցի թեմայով։

* * *

Դեկտեմբերի 19-ին՝ հինգշաբթի. — Այսօր հրաժեշտ առնելով Մայր Աթոռից, իր պաշտոնատեղին մեկնեց հոգ. տ. Գյուտ ծ. վրդ. Նագաշյանը։

* * *

Դեկտեմբերի 22-ին՝ կիրակի. — Ե կիրակի յինանց.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քնն. Հակոբյանը։

* * *

Դեկտեմբերի 29-ին՝ կիրակի. — Մայր տաճարում պատարագեց արժ. Հովհաննես քնն. Մարուբյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունվարի 1-ին՝ շուբեքաբերի.—Մայր տաճարում ամանորի առթիվ մատուցվեց ս. պատարագ: Պատարագեց՝ Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց հայրապետական մաղթանք:

Հալուր պատշաճի քարոզեց Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Ապա ողջ միարանությունն ու հոգևոր ձեմարանի ուսանողությունը, տ. Հայկազուն արքապիսկոպոսի գլխավորությամբ, ուղղվեցին Վեհարան՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետի նոր տարին և ստանալու նրա օրհնությունը:

Կեսօրից հետո հոգևոր ձեմարանի ուսանողները Ամանորի և ս. Սննդյան տոնների արձակուրդների կապակցությամբ մեկնեցին իրենց հարազատների մոտ:

* * *

Հունվարի 5-ին՝ կիրակի.—Ճրագալոյց Սննդյան և Աստուծայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում մատուցվեց ճրագալույցի հանդիսավոր ս. պատարագը: Պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց նախատոնակ, որից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական հանդիսավոր թափորով և «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց Վեհարան:

* * *

Հունվարի 7-ին՝ երեքշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում մատուցվեց ս. պատարագ, «Վասն համօրէն ննջեցելոց»:

Պատարագեց արժ. տ. Նշան քնն. Բեյլերյանը:

* * *

Հունվարի 8-ին՝ շուբեքաբերի.—Այսօր ավարտվեցին ս. Սննդյան և ամանորի արձա-

կուրդները, և հոգևոր ձեմարանում վերսկըսվեցին դասընթացները:

* * *

Հունվարի 12-ին՝ կիրակի.—Է օր Սննդյան:

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Կարապետ արքայութեան երկնից, սուրբ Յովհաննէս Մկրտիչ. որ եղաւ աշխարհի քարոզ փըրկութեան յափտենից» բնարանով:

* * *

Հունվարի 13-ին՝ երկուշաբթի.—Է օր Սննդյան. Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քնն. Մարությանը:

* * *

Հունվարի 19-ին՝ կիրակի.—Ա. կիրակի զկնի Սննդյան.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քնն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 20-ին՝ երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ձեմարանում սկսվեցին կիսամյա քըննությունները, որոնք տեսեցին մեկ շաբաթ և ավարտվեցին լավագույն ու գոհացուցիւ արդյունքներով:

* * *

Հունվարի 26-ին՝ կիրակի.—Թ կիրակի զկնի Սննդյան.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ «Սննդոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի» բնարանով:

* * *

Հունվարի 31-ին՝ ուրբաթ.—Առավոտյան ժամը 12-ին Մայր տաճար այցելեցին Հայրենական «Տու—144» նոր տիպի արագաթոփի մարդատար ինքնաթիոփի ինժեներ-կոնստրուկտոր էդվարդ Յովանը՝ մի խումբ անվանի օդաչուների հետ:

Հյուրերը եղան Վեհափառ Հայրապետի մոտ:



ՍՓՅՈՒՌՈՒՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Զեռնադրություններ Երուսաղեմի Հակոբյանց տաճարում

1968 թ. Վարդավանի շարաթը, հովհանն, Երուսաղեմի Ս. Հակոբյանց ուխտի միաբանության, ժառանգավորների, դասախոսականի կազմի և հավատացյալների համար եղավ ցնծության և ուրախության նշանակալից մի շարաթ:

Մասնակիորաքար ցնծության մեջ էր գրտեղվում միաբանությունը գլխավորությամբ ամեն. առ Եղիշե սրբազն պատրիարքի, որովհետո իր շարքերն էր ընդունում նորընծա չորս արքաների և վեց սարկավագների, իսկ դպրեվանքի 29 ժառանգավորներ արժանանում էին դպրության չորս աստիճանների տվյալներից:

Դպրության աստիճանի տվյալներ:

Դպրության աստիճանի տվյալները կատարվել է հովհանն 26-ին, ուրբաթ օրը, ս. Հակոբ Մայր տաճարում՝ լուսարարակետ տ. Հայրիկ արքեախիսկոպոսի ձեռքով:

Դպրության աստիճան ընդունած ժառանգավորները մեծ մասամբ թքահայեր են՝ Երուսալմ տպիորելու եկած Բիթլիսից, Սասունից, Սուշից, Պոլսից: Նրանցից ոմանք նոյնին քրդախոս կամ թքահայու են, վերջին տարիներին ընդունված Երուսաղեմի հայոց ժառանգավորաց վարժարանը և այնուհետ միայն տպիորած հայերնեն և ծանոթացած հայոց պատմությանը:

Սարկավագների ձեռնադրություն.

Հովհանն 27-ին, շաբաթ օրը, առավոտյան, կատարվել է ժառանգավորաց վարժարանի

բարամյա ընթացքը ավարտած և ընծայարան ընդունված վեց ժառանգավորների սարկավագական ձեռնադրությունը՝ լուսարարակետ սրբազն հոր ձեռքով:

1. Վարդան սարկավագ Տատորյան.—ծնված 1948 թ. Հալեպում:

2. Պողոս սարկավագ Մանուկյան.—ծննված 1948 թ. Հալեպում:

3. Մանուկ սարկավագ Մուրադյան.—ծնված 1951 թ. Հալեպում:

4. Օհնիկ սարկավագ Ալբազյան.—ծննված 1951 թ. Սովորում:

5. Սարգիս սարկավագ Պարսամյան.—ծնված 1951 թ. Արարկիրում:

6. Շահնա սարկավագ Քեռսեյյան.—ծննված 1950 թ. Պոլսում:

Աքեղայական ձեռնադրություն.

Աքեղաների ձեռնադրությունը և օծումը կատարվել է հովհանն 28-ին, Վարդավանի կիրակի օրը, ամեն. առ Եղիշե պատրիարք հոր ձեռքով:

Արարության վերջում առ Եղիշե սրբազն պատրիարքը խոսել է գեղեցիկ և բովանդակալից մի քարոզ՝ անդրադառնալով հոգևոր կոչման բարձրությանը և նվիրականությանը:

Երեկոյան ժամերգության ժամանակ դարձյալ պատրիարք հոր ձեռքով կատարվել է վեղարի տվյալները:

Հավարտ ժամերգության, ժամը 6.30-ին, օրվա հանդիսավոր վակալում է միաբանական ընդհանուր ընթրիքով՝ նախագահությամբ ամեն. պատրիարք հոր, որի ժա-

մանակ արտասահմանում են շնորհավորական խորքեր:

1. Հոգեց. տ. Աղան արեղա Պոլիոզյան.—Սվագանի անունն է Եղիա: Ծնված 1946 թ. Հայոց ապահովությունը ստացել է տեղի Բերեկ վարժարանում: Հնծայրանը ավարտել է 1968 թվականին:

2. Հոգեց. տ. Միփան արեղա Մխայան.—Սվագանի անունն է Հարություն: Ծնված 1948 թ. Հայոց ապահովությունը ստացել է Գերմանիկան և Մեսրոպյան վարժարաններում: Հնծայրանից շրջանավարտ՝ 1968 թվականին:

3. Հոգեց. տ. Նարեկ արեղա Մարֆազել-

Արեղայական ձեռնադրություն Փարիզում

1968 թվականի հոկտեմբերի 27-ին, Գյուղ Խաչի կիրակի օրը, Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովը արքեպ. Մանուկյանը Փարիզի և Հովհաննես Սկրտիչ Մայր եկեղեցում կուսակրոն քահանա է ձեռնադրել բարեց. Արմեն սրկ. Զաքարյանին՝ վերանվանելով տ. Նորվան արքեպահ:

Հոգեց. տ. Նորվան արեղան ծնվել է 1940 թ. Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է Անթիլիասի դպրեվանքում, մինչև



Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ տ. Տիրապար եպս. Մարտիրոսյանը և պատգամավորական ժողովի անդամները

յան.—Սվագանի անունն է Մանվել: Ծնված 1947 թ. Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է ազգային Արգարյան և Անդրամբյան վարժարաններում: Հնծայրանից շրջանավարտ՝ 1968 թվականին:

4. Հոգեց. տ. Ական արեղա Ղարիպյան.—Սվագանի անունն է Հովհաննես: Ծնված 1940 թ. Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է ազգային Արգարյան և Ռուբիսյան վարժարաններում: 1965 թ. ընդունվել է ժառանգավորաց վարժարան և ընծայրան ավարտել է 1968 թվականին:

1956 թ., և ապա Երուսաղեմում: Երկար տարիներ բարեխանորեն ծառայել է Փարիզի հայոց և Հովհաննես Սկրտիչ Մայր եկեղեցում:

«Էջմիածն» ամսագրի խմբագրությունը, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, շերմորեն շնորհավորում է և Երուսաղեմում, և Փարիզում ձեռնադրված հինգ խոստումնալից արեղաներին՝ մաղթելով, որ Երանք լինեն իրենց ապագա գործունեության ընթացքում «մշակը առանց ամօթոյ»:

**Թեմական պատգամավորական ժողով
Բոլիստեստում**

1968 թվականի նոյեմբերի 10-ին Բոլիստեստում հայոց առաջնորդանիստ եկեղեցում գումարվել է Ուսմինիայ թեմական պատգամավորական ժողով՝ նախագահությամբ Ուսմինիայի և Բոլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրապետ և այլն. Մարտիկյանի: Ժողովին մասնակցել են 31 ներկայացուցիչներ, որոնցից 4-ը՝ հոգևորական:

Ժողովը բացվել է առաջնորդ հոր աղոթքով, ողջույնի ու շնորհակալության խոսքով՝ ժողովականերին և Ուսմինիայի կրոնից նախարարությանը ուղղված:

Ապա ժողովի առենապես դոկտ. Գրիգոր Բամպուքճյանը ընթերցում է Ամենայն Հայոց կաթողիկոսի օրինության և շնորհակուրական հետագիրը՝ ուղղված պատգամավորական ժողովին, որն ուղղվում է հոտընկայությամբ:

Ժողովի քննարկմանը ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. Տեղեկատվություն թեմական խորհուրդի գործունեության 19 մայիս 1963—10 նոյեմբեր 1968 ժամանակաշրջանի վերաբերյալ:

2. Հաշվետվություն 1963—1968 տարիների կութական գործառնության:

3. Հնարիտություն նոր թեմական խորհուրդի անդամների, փոխ-անդամների և վերաստուգիչ հանձնաժողովի:

4. Այլ հարցեր:

Տեղեկատվության ընթերցումից և պատգամավորական ժողովին հետաքրքրող հարցերի քննարկումից հետո տեղի ունեցավ մոքերի փոխանակում, ապա ընդունվեցին համապատասխան որոշումներ:

Հնարիտություն թեմական խորհուրդի նոր անդամներ և փոխ-անդամներ և վերաստուգիչ հանձնաժողովի անդամներ հետևյալ կազմով.

Թեմական խորհուրդ

1. Դոկտ. Գրիգոր Բամպուքճյան
2. Պետք Կարապետյան
3. Ալեքսանդրու Սիլվյան
4. Մովսես Շուկան
5. Հովհաննես Պետիկյան
6. Արամ Հակոբ
7. Հրանտ Ավագյան
8. Դոկտ. Հրանտ Տեմիրյան
9. Գևորգ Գևորգյան

Փոխ-անդամներ

1. Համազարպ Խումանանյան
2. Զիկ Տամանյան
3. Քրիստեն Քրիստեա

Վերաստուգիչ հանձնաժողով

1. Նորինան Թաթարյան
2. Կայծակ Հովհաննեսյան
3. Հակոբ Ավագյան

Ժողովը ավարտվեց առաջնորդ տ. Տիրապետ և այլն. Մարտիկյանի «Պահպանիչ»-ով:

**Թեմական մշակութային միության
«Հայկաշեն Ուզունյան» գրական
մրցանակաբաշխությունը**

Բեյրութում մի քանի տարիներ առաջ Թեմական մշակութային միության նախաձեռնությամբ ստեղծվել էր «Հայկաշեն Ուզունյան» անունով գրական մրցանակը, այդուժամայ մեր գրականությանը իրենց նապատրերող հայ գրողներին քաշալերելու համար:

Ինչպես երևում է այդուրքահայ մամուլի հաղորդումներից, «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի հիմնումը լայն հետաքրքրություն է ստեղծել ավյուղի հայ գրողների մոտ:

1967 տարեշրջանի մրցանակի համար ներկայացվել են այդուրքի բոլոր գաղթօջախներից 34 անուն գրական ստեղծագործություններ:

Ներկայացվող գրական գործերը գնահատող հանձնաժողովը հետ երկար քննության, նկատի առնելով նաև այս առջիկ գրական տեղեկագրերը ներկայացված գործերի վերաբերյալ, որոշել է 1200 դրամի գրական մրցանակը բաժանել չորս համապատասխան մասերի հետևյալ բաշխումով.

Ա. Ստեղծագործական բնույթով երկու գրական երկերի.

1. «Տարագիր երկնքի տակ».—Անդրանիկ Անդրեասյան, «որ հեղինակը հայորդական, շերմ ապրումով ու գրագետի տաղանդուկ կներկայացնել այդուրքի մեջ ապրող հայերը իրենց դառն վիշտերով, տվյալանքներով ու սիրելի հույսերով»:

2. «Պահով».—Արամ Հայկաց: «Մրցանակի արժանացած Պահովին մեջ, իր իսկ բացառությամբ, «Բազմազգի մարդիկ ու բազում դասակարգերու անհատներ կապուն խաղաղ ներդաշնակությամբ»: Արդարն, մեկնելով իր հայրենի տուններ, հեղինակը կանցնի Քուրդիստանի լեռները, ապա Պուլիս ու Ամերիկա և գրագետի անվիճելի տաղանդով ու հարազար ապրումով կներկայացնե բոլոր միջավայրերը, իրենց հայտաբղյուր մարդերով»:

Բ. Պատմա-բանահրական բնույթով երկու երկերի՝

1. «Անկում Արտաշեսյան հարատության».
—Հրանտ Ք. Արմեն, «պատմական լուրջ

ուստմնասիրություն մըն է, որ կընդգրկե Արտաշեպյան Հարստության վերջին 55 տարիները։ Հեղինակը լայն չափով օգտագործած է պատմական բազմաթիվ հայ թե օտար աղբյուրներ ու հաջողած է, խոր վերլուծութերով, հաճախ ճշգրիտ եզրակացություններով։


2. «Հուշամատյան Պոնտական Ամասիո»։ — Գաբրիել Յ. Սիմոնյան, «Տարիներու տըքացան աշխատանքով և իր անձնական միջոցներով լույս ընծայած է Հուշամատյան Պոնտական Ամասիո գիրքը,...

Այս պատկառելի հաստրը, ավելի քան հազար էջերու մեջ, 150-ե ավելի նկարներով և շքեղ տպագրությամբ, համադրումն է երկարամյա լուրջ պրատումներով ձեռք բերված թանկագին ծանոթություններու մեր պատմական հայրենիքի կարևոր մեկ բնակավայրին մասին»։

«Հայկաշեն Ուզումյան» գրական մրցանակի գնահատիչ հանձնախումբը հիշատակության արժանի է գտնել նաև մրցանակարաշխության ներկայացված հետևյալ գործերը։

1. «Թեկնածուն»։ — Զարենի Որբունի։
2. «Բժիշկը կյանքին ու մահվան հետ»։ — Դոկտոր Տիգրան Վարժապետյան։
3. «Ուսկի գեղոն»։ — Մարի Աթմանյան։
4. «Պիտի չարչարեմ բառերը»։ — Գեղրդ Ամենյան։
5. «Տիգրիսի ափին»։ — Լևոն Շահոյան։
6. «Վերադարձ»։ — Հրանտ Գուլումճյան։
7. «Չյուներն ի վեր»։ — Գրիգոր Շահինյան։
8. «Դասակարգային կոհվներու գիծը ազգերու պատմության մեջ»։ — Լևոն Մարտիրոսյան։
9. «Պատասխանատունները Տարոնի եղեռնին»։ — Աղան Տարոննեցի։





ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



1968 թվականի նոյեմբերի 17-ին Երևանում, Արվեստի աշխատողների տանը, բացվեց Մայր Աթոռի բարերար և Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող շվեյցարահայ պրճ. Կարապետ Ղազարյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Պրճ. Կ. Ղազարյանը ծնվել է 1905 թվականին Կեսարիայում: Ավարտել է Կ. Պոլի Կենտրոնական վարժարանը, այնուհետև,

որպես ջերմ եկեղեցակեր հայ մարդ, նա իր գործոն և շնորհակալ մասնակցությունն է բերել Ստամբուլի հայության եկեղեցական, կողթական, մշակութային կյանքին, երկար տարիներ՝ տ. Գարեգին և տ. Շնորհք պատրիարքների օրոք:

1964 թվականին տեղափոխվել է Ժնև:

Պրճ. Կ. Ղազարյանը մանկուց սիրել է Ակարչությունը, ունեցել է ինքնարություն և ճաշակ դեպի արվեստը և իր ազատ ժա-

մերին ձեռք է առել նաև վրձին՝ առանց հաճախելու նկարչական որևէ դպրոց, առանց աշակերտելու որևէ նկարչի:

1967 թվականին Ժնևում կազմակերպվում է նրա ստեղծագործությունների անդրանիկ ցուցահանդեսը, որին հաջորդում են այլ ցուցահանդեսներ: Բայց պրա. Կ. Ղազարյանի տարիների երազն է եղել իր ինքնատիպ արվեստը ցուցադրել նաև հայրենի երկրում: Եվ ահա իրականանում է նրա տարիների ջերմ իդաը:

Ցուցահանդեսի բացումը կատարում է բանաստեղծությ Մարտ Մարգարյանը՝ ջերմ և սրտառու խոսքերով: Ապա սիյուռքահայ արվեստագետին ողջուզի և շնորհավորանքի դրվագալից խոսքեր են ասում Վարպետը՝ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, հայրենի նկարիչներ Միներ Արենյանը և Գրիգոր Խանջյանը: Ձերմ, հուզիչ ու սրտարուին էին նաև պրա. Կ. Ղազարյանի շնորհակալական ու երախտագիտական խոսքերը՝ ուղղված հայրենի կառավարությանը, Սիյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին, Հայոց Հայրապետին և բոլոր ներկաներին:

Նոյեմբերի 18-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Երևանում այցելում է պրա. Կ. Ղազարյանի ցուցահանդեսը՝ լավագույն տպավորություններով:


Պ. Կ. Ղազարյանի նկարները դիտողին համակում են կյանքի սիրով ու պաշտամունքով, հայկական պայծառ լավատեսությամբ, զվարք գույների երաժշտականությամբ և նորերագությամբ, բնույթան գեղեցկության գեղարվեստական հուզականությամբ:




Սիյուռքահայ արվեստագետը տուն վերադարձավ նոր լիցքով ու երազանքով, իր հոգում Երևանն ու Աևանը, Էջմիածինն ու Զվարթնոցը, հավերժությունն ու հապատությունը իր հարազատ ժողովրդի:

Այս բոլորը նոր ու վատ գոյմեր պիտի հաղորդեն պրա. Կ. Ղազարյանի նկարչական վրձնին, և նոր լուսներ՝ նրա հայրենասեր սրտին ու որոնող արվեստագետի մըստին:

Հաջողություն Ձեզ, պրա. Կ. Ղազարյան:





ԴՐ. ՄԵՍՐՈՊ. Շ. ՎՐԴ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Հոգևոր Բավիկ Վիհննայի Բայոց)

ՕՐՄԱՆՅԱՆ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԲԱՆ

Հայ եկեղեցվո և հայ պատմագրության կարկառուն դեմքերեն Մաղաքիա արքեպս. Օրմանյանի մասին հրատարակված կան շարք մը գրություններ. իբր պատմաբան, սակայն, դեռև ան հոր ու մանրաբնին ուսումնասիրության մը առարկա եղած չէ: Կարճառոտ հոդվածի մը մեջ ալ անկարելի է ամբողջապես ու արժանապես ներկայացնել պատմաբան Օրմանյանը. հետևաբար գրությունն անխափորձ մըն է ամփոփ կերպով և կարարագրելու անոր մեծ գործը և գործին բնորոշ գիծերը:

Ընդունակությունն ու պատրաստությունը

Հայոց մեջ տարաբախտաբար երեմն սխալ հասկացողություններ եղած են ու կան այսօր ևս պատմագրության մասին: Ումաք խորհած են կամ կխորհին, թե հանկարծակի փափաքով կամ ներշնչուով կարելի է պատմագետ ու պատմագրող լինել: Մինչդեռ Քիրավի պատմությունը, գիտության մյուս ճյուղերուն հնան, կպահանջե հատով ընդունակություն և պատրաստություն: Այստեղ Օրմանյանի առնչությամբ հարկ է շեշտել, որ ան պատմության ամացւու մը չէր, այլ ի թե՞ ուշիմ անձ մը, որ իր իմացական կարողությունները զարգացնելով հանդերձ՝ մեղվաշանորեն ուսալ Հռոմի մեջ և միտքը ամբարեց գիտությամբ: 1868-ին ան-

մագիստրոսության աստիճան ու տիտոռս ստացավ աստվածաբանության, իմաստասիրության և եկեղեցական իրավագիտության մեջ: Այդ ժամանակ արդեն, իբր քանի յոթնամյա երիտասարդ կրոնավոր մը, քաջարար գիտեր հայերեն գրաբար, հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն և բրեդեն լեզուները: Ահավասիկ այսպիսի բազմակողմանի պատրաստություն ուներ Օրմանյան, երբ Հասունյան-հականասունյան վեճերուն աղիթով կձեռնարկեր գրելու իր առաջին երկերը:

Առաջին գործերը

Հասունյան տագմանին առիջիկ, Օրմանյան լինելով խորապես հայենասեր անձ մը, կողմնորոշվեցավ ի հասար ազգային ողության և հանդիսացավ հականասունյան ներու պարագլուխ: Ան ոչ միայն գործով և բանիկ, այլն գրչով պաշտպանեց արևելյան կաթողիկե եկեղեցիներու ներքին անհայտության հարցը: 1870—1873 տարիներուն ան հրատարակեց հետևյալ շատագովկական աշխատությունները.

1. Gli Armeni catholice orientali («Արեւելյան կաթողիկե Հայք»), Խաթանուլ, 1870:

2. Il Reversurus, Հռոմ, 1872:

3. Les droits civils et la liberté religieuse des catholiques d'Orient («Քաղաքային իրավունք և կրոնական պատություն Արևելքի կաթողիկայց»), Հռոմ, 1872:

Օրմանյան սրբազնի մահվան 50-ամյակի (1918թ. նոյեմբերի 17) արքիկ հաճուքով հրատարակում ենք Բագ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանի սույն արեքավոր ուսումնասիրությունը՝ որպես երախտագի-

տության և Բարգանի սրտագին տուրք մեծանուն եկեղեցականի հիշատակի և մատենագրական մեծ վաստակի:

Խմբագրություն

4. La question arménienne («Հայկական հարցը», հոդվածը), Հռոմ, 1872—1873:

5. Lettere sulla questione armena («Թօնութ ի վերա հայկական հարցի»), Բոլոնի, 1872—1873:

6. Le Vatican et les Arméniens («Վատիկան և Հայք»), Հռոմ, 1873:

Օրմանյանի այս սկզբնական երկերն իսկ թեպետ առավելաբար վիճարանական քննություններուն գրված են հմտությամբ, առողջ տրամարանությամբ և հանդգնությամբ: Ահավասիկ թե ինչպէս Շուպանյան կամահատե հատկապես Վատիկան և Հայք գործը. «Լայն և ամոր հմտությամբ, հստակ ո ջղուտ տրամարանությամբ և հանդրոգն ո պայքարող ոճով գործ, որ բանակրվական ոլորտեն կրաքարանա, պատմական լորջ աշխատության մը պատկառելի գոյնուն ունի»¹: Համեմատեալու, Օրմանյան իր մասնագետն ինչ ժողովորդի պատմության, ինքզինը դրսութեց ինչ եկեղեցի անդամ և հոգևորական դառնալեն ետք:

Հոդվածները

Օրմանյան ինչ եկեղեցի պատմությամբ համաձայնորդնեն սկսավ պարապիլ, երբ 1889 թիվն կոչվեցավ վարելոյ Սրբաջ նորահաստատ դպրելամբը: Այդ առթիվ ան իր դասիսության պատրաստեց աստվածաբանության, ծխագիտության և ինչ եկեղեցի պատմության դասագրքեր: Եկեղեցական պատմության ինչ-ինչ հատածներ՝ 1901 թվականեն սկսավ մաս առ մաս հրատարակեց Գյուտ Աղանանց ալիս քահանայի Լուսա հանելեսին մեջ, Թիֆլիս: Լուսան յայն տեղ տվավ Մաղարիս արքեպիսկոպոսի գիտական հոդվածներուն, որոնք կնկարագրեն Ամենայի Հայոց Հայրապետներու գործունեությունը և անոնց շրջանի քաղաքական ու մշակութային կարևոր երևություններն ու դեպքերը: Այս գրությունները նախանշութ եղան մեծ պատմարամի ձեռքին, երբ նա կգրեր Հայատանակաց եկեղեցին ընդարձակ պատմությունը: Բարգեն եպս. Կյուլեսերյան Օրմանյան հրատարակություններու շարքին կնշէ նաև «Ամենայի Հայոց Հայրապետները (Առմա համենափ մեջ 35 հոդվածներ)»²:

¹ Արշակ Շուպանյան, Մկրտիչ Պեղմակաշվանի կամարն ու գործը, Փարիզ, 1907, էջ 195:

² Ազգապատում, 9, էջ մի: Իմ անձնական հետազոտությամբ հաշվիցի 25 հոդվածներ (!), նոր կը ներկայացնի 48 Հայրապետներ: 1901—1903 թթ. գրությունները անստրագիր են .1905—1906 թթ. նորմանանքը կը բեր «ԳՅԱՆԱՆՐ» ստորագրությունը. 1909 տարվան առաջին 10 թիվները ստորագրյալ են «Մ. Ա. Օ.», իսկ 1909—1911 թթ. ուստամբափրամունքները՝ «Մաղարիս Ան. Օրմանյան»:

Սարքի ես կնշանակեմ այս հոդվածները, որոնք ինձ ծանոթ են:

1. «Չորրորդ դարու հայ եկեղեցին».

ա) Տ. Ա. Արիստակես Պարթև,

բ) Տ. Ա. Վրթանես Պարթև,

գ) Ա. Գրիգորիս Աղվանից կաթողիկոս,

դ) Տ. Ա. Հովհան Պարթև,

ե) Ա. Դամիել Աստրի,

զ) Տ. Փառեն Աշտիշատեցի,

Լուսա, 1901, թ. 1, էջ 13—50:

2. «Մեծ Ներսես», 1901, թ. 2, էջ 65—112:

3. «Ներսես Մեծի հաջորդներ».

ա) Տահակ Մանավկերտացի,

բ) Տ. Զավեն Մանավկերտացի,

զ) Տ. Ասպուրակես Մանավկերտացի: 1902, թ. 2, էջ 135—152:

4. «Ս. Սահակ Պարթև» (ընդ որում՝ Ս. Սեպուակ և թարգմանիչը), 1902, թ. 5, էջ 144—164, թ. 6, 138—159:

5. «Ս. Հովհան Հողոցմեցի», 1903, թ. 1, էջ 208—227, թ. 2, 122—138:

6. «Գյուտ կաթողիկոս»,

ա) Տ. Մելիքե Մանավկերտացի,

բ) Տ. Մովսես Մանավկերտացի,

զ) Տ. Գյուտ Արամեացի,

1903, թ. 4, էջ 107—119:

7. «Տ. Հովհան Մանավկունի», 1903, թ. 6, էջ 213—224, «Բարգեն Ոթմեցի», նոյն անուն, էջ 224—227:

8. «Երկրորդ Պահլավունիք. Տ. Գրիգոր Բ Վկապաւեր», 1905, թ. 4, էջ 91—100, թ. 5, 102—109:

9. «Երկրորդ Պահլավունիք».

ա) Տ. Բարսեղ Ա. Անեցի,

բ) Տ. Գրիգոր Գ. Պահլավունիք,

1905, թ. 8, էջ 68—75, թ. 9—10, 77—82:

10. «Տ. Ա. Ներսես Շնորհալի», 1906, թ. 7—8, էջ 153—168:

11. «Տ. Գրիգոր Դ Տղա», 1909, թ. 3, էջ 4—22:

12. «Տ. Գրիգոր Ա. Քարավեճ», 1909, թ. 5—6, էջ 13—17. «Տ. Գրիգոր Զ. Ապիրատ», էջ 17—37:

13. «Տ. Հովհաննես Զ Մեծաբարո», 1909, թ. 7—8, էջ 5—11. «Տ. Կոստանդին Ա. Բարձրեկողի», էջ 12—19:

14. «Տ. Կոստանդին Ա. Բարձրեկողի», 1909, թ. 9, էջ 9—13. «Տ. Հակոբ Ա. Կլայնի», էջ 13—15. «Տ. Կոստանդին Բ Պրենագործ», 15—16. «Տ. Ստեփանոս Դ Հոռմկալյացի», 17—18:

15. «Տ. Գրիգոր Լ Անավարզեցի», 1909, թ. 10, էջ 12—21:

16. «Տ. Կոստանդին Գ Կեսարացի», 1909, թ. 11, էջ 46—52. «Տ. Կոստանդին Դ Լամբրուսացի», 53:

17. «Տ. Հակոբ Բ Տարտոնացի», 1909, թ. 12, էջ 23—30. «Տ. Միհթար Գոներցի»,

- 30—34. «Տ. Հակոբ Բ Տարտոնացի, դարձալ», 34—35:
18. «Տ. Մեսրոպ Ա. Արտազեցի», 1910, թ. 1, էջ 12—14. «Տ. Կոստանդին Ե Սաեցի», 14—15. «Տ. Պողոս Ա. Սաեցի», 15—19:
19. «Տ. Թեոդորոս Բ Կիլիկեցի», 1910, թ. 2, էջ 36—41. «Տ. Կարապետ Ա Կենեցի», 41—44:
20. «Տ. Հակոբ Գ Սաեցի», 1910, թ. 3, էջ 22—26:
21. «Տ. Գրիգոր Ը Խամալյան», 1910, թ. 4, էջ 19—21. «Տ. Պողոս Բ Գառնեցի», 21—25:
22. «Տ. Կոստանդին Զ Վահկացի», 1910, թ. 5—6, էջ 61—69:
23. «Տ. Գրիգոր Թ Մուսարեգյան», 1910, թ. 7—8, էջ 14—20. (Նույնը Մուրճ, 1903, հովհանոսուոսու):
24. «Տ. Կիրակոս Ա Վիրապեցի», 1910, թ. 9—10, էջ 10—18:
25. «Տ. Գրիգոր Ժ Զալարեգյան», 1911, թ. 1—2, էջ 79—91:

Գործերը

Օրմանյանի պատմա-գիտական գործերն են.

1. **Հայոց եկեղեցին**, որ նախ ֆրանսերեն լեզվով լրաց տեսավ, և ապա հեղինակը զայն «հայերենի վերածեց»: Անգլիերենի թարգմանեցավ G. Margar Gregory-ի կողմանը, իսկ ոռուերենի՝ ձեռամբ A. M. Boudagova-ի:

Ֆրանսերեն հրատարակությունը.— L'Église Arménienne, Փարիզ, 1910, հրտ. Ernest Leroux: Բ տպագրությունը կատարվեցավ Անթիլաս, 1954 թ., շահասիրությամբ պրե. Տաճառ Սրբայանի և մեկնասությամբ դոկտ. Գեղամ Հ. Ալվարյանի:

Հայերեն հրատարակություն.— Հայոց եկեղեցին, Խթաներով, 1911, հրտ. Վ. և Հ. Տեր-Ներսեսյան: Նույն հրատարակչական տունը վերստին տպած է գիրքս 1912 և 1913 թվականներուն: Դ տպագրությունը կատարվեցավ 1949-ին, Բուենոս-Այրեսի մեջ, նախաձեռնությամբ Գարեգին արքեպոս. Խաչատրյանի: Ե (Անթիլաս, 1952) և Զ (Պեյրութ, 1962) տպագրությունները եղան պրե. S. Սրբայանի շահքերուն շնորհիվ:

Անգլիերեն հրատարակություն.— The Church of Armenia, Լոնդոն, 1912, հրտ. A. R. Mowbray and Co: Բ տպագրություն՝ 1955, Բուատոն: Նոր հրատարակություն մը 20-րդ դարին հավելումով («Քանակերորդ դար»). պատմություն հայ եկեղեցւով) կատարվեցավ Դերենիկ եպս. Փոլատյանի աշխատանքով, 1955 թվին, Լոնդոն-Օքսֆորդ,

Ա տպագրության հրատարակչական տակ կողմէն:

Օրուերեն հրատարակություն.— Armanianskaia Tserkow, Մուլվա. 1913, հրտ. Բարիստարյան տպարանի:

2. **Ազգապատում**. Հայ ուղղափառ եկեղեցվու անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմված: Մասն Ա. (սկիզբեն մինչև 1221): Խոթանովով, 1912—1913, հրտ. Վ. և Հ. Տեր-Ներսեսյան: Մասն Բ (1221—1808), Խթանովով, 1918—1914, հրտ. Վ. և Հ. Տեր-Ներսեսյան: Մասն Գ (1809—1909), Երմասին, 1927, հետ մասն հրատարակություն՝ հոգողությամբ Բարգեն եպս. Կրողեւերյանի:

Ազգապատումի Բ տպագրությունը կատարվեցավ Պեյրութ, 1959—1961, տպարան Աւան, մեկնասությամբ պրե. Տաճառ Սրբայանի:

Օրմանյան սրբազնի երկասիրություններեն պատմական բնույթ ունի նաև Աթոռ Հայատանայաց, Խոնք և Խոսք (ինքնակենսագրություն) և Պատմություն Արմաշու, որոնք սակայն ուղղակի ուսումնաժիրական մենագրություններ չհիներով՝ նկատի չեն առնված ենթեկա հոդվածին մեջ:

Հայոց եկեղեցին

Օրմանյան երր կգրեր Հայոց եկեղեցին, հրապարակի վրա չկար գիրք մը, որ համառոտ, բայց ճիշդ, բազմակողմանի և ամրողական կերպով հանրության մատուցաներ հայ առաքելական եկեղեցին: Մովսիսյան վարդապետի³, Կարապետ ծ. Վարդապետի⁴ և Արքահամ Զամինյանի⁵ գործերը առավելապես պատմական էին և կիսկատար: Հետևկարար անհրաժեշտ էր հայ եկեղեցագիտության գեղեցիկ միահատորյակ մը, որպեսզի հայն ու օտարը լավագեն նաև նաև այն եկեղեցին, որ փառքն ունի աշխարհի պետականութեն ընդունված առաջին քրիստոնեական հաստատությունը ըլլալու և իր գոյության ու անաղարտ պահպանության համար մեծ զոհողություններ հանձն առած ըլլալու:

Քառասունինգ գլուխներու մեջ Օրմանյան պարզ լեզվով, հստակ ու համոզիչ ոճով և որամարանական շարադրությամբ կներկայացնե հայ եկեղեցին՝ եական կե-

³ Հումիկ վրդ. Մովսիսյան, Հայատանայաց առաքելական և եկեղեցւով պատմություն, Ա. մաս, Եջմանին, 1908:

⁴ Կարապետ ծ. Վարդապետ և Տեր-Մկրտչան, Հայոց եկեղեցւով պատմություն, Նոր Խանիջնան, 1908:

տերու մեջ նկարագրելով անոր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը, ազգային նկարագիրը և ազդեցությունը հայ ժողովուրդի ճակատագրին վրա: Պատմական բաժինը կրածկանա տասնինը գլուխներեն, որ ազգային նկեղեցվու

— Միութենական ձգտումներ և հարաբերություններ.

— Մանավոր Աթոռներ (Կիլիկիո և Կ. Պոլսո).

— Դ, Ե, ԺԷ («Զարթումի դարը»), ԺԸ և ԺԹ դարերու պատմության հատկացված են առանձին գլուխներ:



S. Մաղարիա արքեպ. Օրմանյան

պատմությունը տրված է բնորոշ գիծերով մեջ: Օրմանյան հետևած է պատմության կամ պատմական դեպքերու զարգացումն, և սակայն հյութերը հավաքած է հիմնական խնդիրներու շուրջ: Այդ խնդիրներն են.

— Հայ նկեղեցվու ծագումն ու հաստատությունը.

— Հայ դպրություն.

— Քաղկեդոնական խնդիրներ.

— Ընդհանրական կաթողիկոսության տեղափոխությունները.

Կարծեմ, թե հայ նկեղեցիի տասնինը դարերու պատմության այս դասավորումը լավ է, մանավանդ երբ նկատի առնենք, որ գլուխները ենթարածանումներ չունին: Օրմանյան իրաց և դիպաց պարզ նկարագրող մը չէ, այլ վերլուծող մը պատմության: Ահա թե ինչո՞ւ ան հաջողած է ճշգրիտ կերպով պատկերացնելու նկեղեցիին հատաշընթացքը, դժվարությունները, պայքարները և կարեւոր երևույթները: Չէ մոռցած նաև ըստ տեղվույն հերքելու այն թյուր կարծիքներն

ու մեղադրությունները, որոնք անարդարութեն վերագրված են հայ եկեղեցին:

Հայ եկեղեցական պատմության հիմնական սկզբունքներն ու կարևոր հարցերու մասին Օրմանյանի տեսությունները անդին ոշադրությամբ պիտի քննվին. ուստի այս տեղ կփափաքիմ վերլուծել միայն հայ եկեղեցի ԽԵ գոյնը, որ հետինակը կրացաւրեն հայ եկեղեցւ ազդեցույթունը հայ ազգի բախտին վրա: Ընդեւն անոնց, որ Հայաստանի անկումը կվերագրեն քրիստոնեության, ան կատարեն, թե նաև քրիստոնեության պէտական կրոնը հոչական և Արշակունյաց թագավորության կործանման միջև. «Ամրող մեկ ու կես դար միոց մը անցած է»⁶ և երկրորդ՝ այդ կործանման «նախակիզբները չորրորդ դարեն այ առաջ են, և իրենց ծագումը կամեն հոռոմայեցվոց և պարթևաց մեջ մղված պատերազմներն»⁷: Անոնց որ կդատապիտեն Հայոց քրիստոնեությունը պահպանելը ի գին բազմաթիվ զոհերու և մեծամեծ զոհությանց, օրինակ պարսկական մաղթեականության դեմ, Օրմանյան դիտել կու տա, որ հարցը զուտ կրոնական չէր, այլ մանավանդ ազգային, որովհետև Տիգրոն կիետամտեր ջնել հպատակ ազգերու ազգային առանձնահատկությունները, և «եթե հայերն ալ այդ պայմանին (իմա կրոնափոխության) հպատակեին, իրենք ալ որիշ դեմի-մաղեցը ընդունող ազգությանց պէս, այսոյ պարսիկ տարրին մեջ խառնված և իրենց խկույրունը կորսեցուցած պիտի ոյլային»⁸: Օրմանյան տեսությունը կարեի է ամրացնել եկեղեցական պատմության հնուտ որիշ անձի մը՝ Երվանդ Տէր-Մինասյանի վկայությամբ, թե «եթե հայերը քրիստոնեությունը չրնդունեին և կրոնով ու պէտականությամբ միանային պարտիկների հետ, այդ իրողությունը ամենավե հավանականությամբ կը տանը դեպի ձուում իրանցիների հետ և հայ ժողովորդը կդադարեր իրեն ազգային միավոր գոյություն ունենալուց»⁹:

Օրմանյան տրամաբանական պատասխանով մը կըմքերան ենաւ այն անձերը, որոնք հայերուն անկման պատճառ կերպացնեն իրենց ամուր հարումը ազգային եկեղեցին: Ալդասիներուն կրու. «... Դ-րժվար չէ անցելուն մեծն երևան հանել որ այն ամեն հայեր, որոնք անպայման կերպով հոռմեադական կաթողիկոնուն հարեցան, հետզինետե կորավեցան, մինչև իսկ

անոնենին ալ չմնաց»¹⁰: Հասկ ուրեմն մեծ պատմաբանը խորհրդադությունները կամ փոփէ հետևալ առողջ եզրակացորդան մեջ. «Հայը, դարերեն ի վեր քաղաքական միջոցներ գրկած, սերու փարած է եկեղեցական կյանքին, և զավե ճանչցած է իր փորձության խարիսն մը յուր ալելորդ կյանքին մեջ: Անոր շնորհիվն է որ թեստես վտանգված ու տկարացած, բայց վերջապես կրցած է յուր գոյությունը պահել, և մահացու արկածներուն մեջ կյանքը ապահովվել»¹¹:

«Ազգապատում»-ի աղբյուրները

«Ազգապատում»-ի ստեղծման մեջ Օրմանյանի հաջողության գլխավոր պատճառներն մին իր աղբյուրներու ճնշությունն է: Ան օգտագործած է իր ժամանակին ճանորհ հայ բոլոր պատմիչներն ու այլ մատենագիրները, ինչպես և լատին ու հուն եկեղեցուները: Ակաբնայրութերու կողքին ան իր ձեռին ունեցած է նաև հայերեն ու օտարակեզու բազմաթիվ հետազոտություններ հայոց պատմության, ընդհանուր եկեղեցվու պատմության և աշխարհագրության վերաբերյալ: Հայ մամուն ալ, բանասիրական հանդեսներով, օրթէթերուլ և շարաթաթերթերով, օգտակար եղած է անոր:

Օրմանյան իր աշխատանքը չէ սահմանավական տպագիր հյութերու պարունակին մեջ: Ան Ազգապատումի համար ատաղձ հավաքած է նաև այս մը ձեռագրական աղբյուրներէ: Աստեցմէն հիշատակելի են՝ Սարգիս դպիր Սարաֆ-Հովհաննեսյանի գրությանց ձեռագիր հավաքածոն, Գիրք կանաց և դատաստանի, Տուացուց ծոցի ի Ստեփանոս Գոյներիցանց, Գրիգոր Վոդ-Դարանացիի Սատվածաղունին հիշատակարանները, Կիլիկան կալիծենք (Սսո կաթողիկոսարանի դիվանեն քաղված համակերպություններ, 1903—1915 թթ.), «Ուտանավոր բան» Մարտիրոս Ղրիմեցիի և այլն: Ի տարբերություն կարգ մը այլ գրութերու, Օրմանյան ամենայն բժամներությամբ և պարկետությամբ միշտ հշանակած է իր աղբյուրներու բնագիր մեջ, բայց ոչ էթեռու ներք, որպեսզի «ընթեղոցոյին ուշադրություն» չկաշկանի»¹²:

Ս. Հրդյուրներու առատությունն ու բազմազանությունը շատ ճպաստած են, որ մեծ պատմաբանը կարեն մենայուն կոթողական գործ մը հայ ժողովուրդի 1900 տարիներու պատմության արձանագիրը կանգնել հաշողապես:

⁶ Հայոց եկեղեցին, Անթիլիաս, 1952, էջ 192:

⁷ Նոյն ան:

⁸ Նոյն ան, էջ 192—193:

⁹ Երվանդ Տէր-Մինասյան, Ուկեղարի հայ գրականությունը, Երևան, 1946, էջ 7:

¹⁰ Հայոց եկեղեցին, էջ 193:

¹¹ Նոյն ան, էջ 194:

¹² Ազգապատում, էջ 11 («Այսագիտելիք»):

Հիմնական սկզբունք

Օրմանյան հիմնական որոշ սկզբունքներու հետևած է: Հայոց եկեղեցին և Սգգապատումը գույքու ատեն: Երկար կիսի հոդվածի մը մեջ քննել բոլոր այդ սկզբունքները. հետևաբար ես կհայտադրեմ կարնորագովները:

1. Օրմանյան համար և իրականության մեջ հայ եկեղեցական պատմությունը չի կրնար գրվիլ անշատաբար հայոց ընդհանուր պատմութենեն, որովհետև, մանավանդ անցյալին, եկեղեցին հիմնական ստանցքն ու առաջնորդ եղած է հայկական կյանքի: Այս տեսությամբ Օրմանյան լայն տեղ տված է եկեղեցական իրաց և դիպաց կողքին բաղադրական անցուղարձերուն, ինչպես և մատենագիրներու և գրական երկույթներու: Հետևաբար Սգգապատում տիտղոսը, որ յարգմանի «Պատմություն հայոց ազգի», լիազես կարդարանա աշխատության բովանդակությամբ:

2. Պարզ է, որ հսկա գործ մը մոտավորապես 2800 մեծադիր էջերէ (=5600 պունակ) բաղկացյալ, ոյուրին չէ բաժնել ըստ ցյուղի կամ շրջանի: Ինչպես տեսանք, Հայոց եկեղեցին մեջ Օրմանյան պատմությունը բաժնած է որոշ հարցերու, իրադարձություններու և դարերու վրա: Բայց Սգգապատումի պարագային կաթողիկոսներու անոններուն տակ դասավորած է խնդիրները: Կարևոր է անդրադարձան, որ ասիկա ձևական բաժանում մըն է՝ պամելու համար դեպքերու շարահարությունը¹³: Եթե հեղինակը ուրիշ մերող մը գործադրեր, պիտի չկարենար եկեղեցական ու բաղադրական անցուղարձերը միահար ու համաշափ կերպով շարադրել:

3. Օրմանյան լուրաբանչուր կաթողիկոսի համար մակդիր մը տված է՝ նկատի յունենալով եկեղեցակային բնավայրը կամ գործունեության շրջանակը: Այս ուղղությամբ կրսէ: «Մենք անհրաժեշտ դատաճ ենք, լուրաբանչուր հայրապետի մակդիր անոն մը գործածել, վասն զի կարգի թվահամարը, որով սովոր են հիշվիլ գարականեր և արուուկալներ, հիմ ատեններ գործածական չէ եղած և նորերուն ալ կազմաները իրարու անհրաժմար են, և հնար չէ իրոն որոշիչ հատկանիշ կամ հասուկ անոն մը ճանանալ կարգի թվահամարները»¹⁴: Մեծ պատմաբան կաթողիկոսներու համար որոշած մակդիրները տեսակ մը նվիրական ու վերջնական անուններ են, որոնք ընդունված են և նույնությամբ կգործածին նոր հեղինակներու կրողմնե:

4. Հայ եկեղեցիի օրինական կաթողիկոս են անոնք, որ ազգին ու եկեղեցիին միահամուռ կամբով ընտրված են: Այս սկզբունքի հիման վրա, Օրմանյան արդարն և իրավամբ հակաթոռ հոչակված է և հայրապետներու կանոնական ցանկեն դրու տողած այն անձերը, որ բռնի գահակալած են՝ օտար տերության մը հովանին ներքև, հակառակ եկեղեցականներու և ժողովուրդի մեծամասնության կամքին:

5. Օրմանյան իր դասումներուն մեջ իր մեկնակետ ունեցած է այն ճշմարիտ սկզբունքը, որ կաթողիկոսներ մարդկայնորեն սխավական են ու իրենց ավագությունները լոկ անձնական բրույթ կրտեն և երբեք չեն կարող եկեղեցվու պաշտոնական դիրքեն ու դավանության վրա ազգել: Ան կարե. «Համարձակ կհայտարարենք ևս, թե վարդապետներ և եպիսկոպոսներ, և մինչև իսկ կաթողիկոսներ ալ գտնվեցան, որ հայ եկեղեցվու նախնական ավանդությանց և սկզբանց հակառակ խունցան կամ գրեցին: Բայց անանկեներուն տեսությունները իրենց անձնականներ անդին չեն կրնար անցնին, և իրենց անհամաձայնությունը չէր կրնար խախտել կամ փոփոխել հայ եկեղեցվու հիմնական դավանությունը, որ փոփոխելի կետ մը չէ»¹⁵:

Կարևոր հարցեր

Օրմանյան ըլլալով գորավոր տրամաբանության տեր և գիտուն անձ մը, ճիշտ լուծում տված է առհասարակ հայոց պատմության, հատկապես եկեղեցական պատմության հարցերուն և արդարորեն դատած վիճելի դեպքերն ու դեմքերը: Ես կրավականաւամ հիշելով քանի մը օրինակներ, իր հաստատություն կարծիքիս:

Հայ եկեղեցվու առաքելական ծագումը հայոց համար անձակածելի և նվիրական իրողություն մըն է, որ և ընդունված է հայ և օտար ողջմուն հեղինակներէ: Ուսաք սական իզուր ճգնած են և կճգնին մերժել հայ եկեղեցի առաքելական հանգամանքը: Օրմանյան պատմական և ավանդական տվյալները հասաց բերելե եսոր կըսէ այդպիսի երերուն: «Եթե ումանց համար շատ գորավոր շերնիր հայոց եկեղեցվուն առաքելական հանգամանքը, հարկ կսեպենք դիմել տալ, թե ավելի գորավոր չեն ուրիշ եկեղեցիներուն առաքելականության ավանդություններն ալ, և նոյնիսկ Պետրոսի Հոռոմ երթալուն պատմությունը կամ Հովհաննեսի Եփեսոս գտնված լինելը, քննադատներէ իր անվիճելի ստուգություններ չեն նկատվիր. թե-

¹³ Սգգապատում, էջ 12 (պր. ԺԲ և ԺԳ):

¹⁴ Սգգապատում, էջ 1937:

¹⁵ Հայոց եկեղեցին, էջ 110:

պես և լատինական և հունական եկեղեցիներ այդ ավանդությանց վրա կիրամնեն իրենց ստաքելականությունը: Եթե հունա-հոնուական աշխարհին գործերն ազ պարզ կամ տևար ավանդություններով կրորշվին, որշափ ևս ստավել Արևելքին և ենթին արեւիքին և այբուբենին գորկ Հայաստանին եղելությունները»¹⁶:

Ըստիհանրական հայրապետության Աթոռի կիլիկիական Հջմիածին փոխադրության առընչությամբ Օրմանյան կղիրքորոշվի ի հապատ Հջմիածին: Ան Աթոռին 1441 թվի փոխադրությունը անհրաժեշտ կգտնե, քանի որ նախ, կիլիկյան թագավորությունը, որ կրնար քաղաքական նեցուկ մը ըլլալ կարողիկոսության՝ կործանած էր, և երկրորդ, Սառ եկեղեցականությունը առհասարակ անկյալ վիճակ մը ուներ. և հետևաբար աղյուս ունէ արդարացուցիչ պատճառ չկար, որ ընթիանրական կաթողիկոսությունը «իր համանական և նվիրական սրբավարեն դուրս թափառեր»¹⁷:

Առողջ է հան Օրմանյանի քաղաքական ուղղությունը: Զանազան առիթներով ան կճաղկե հայոց անհետատես քաղաքականությունը, որով փոխանակ Արևելքի մերձակա ույժերուն հետ համաձայնելու կամ քարեկամանալու՝ Արևմուտքի ապարդյուն օգնությանց կրիմենին¹⁸: Հայոց բնական ձգությունը ու քաղաքականությունն ազ այսպես կնկարագրեա ան: «... Ամեն բարեմիտ հայ որիշ փափաք չունի, բայց եթե յուր դրացիներուն հետ խաղաղ ու հաշու ապրի: Հայուն պահանձնի է որ վսաս չհասնի իր կյանքին, իր պատիվին, իր ստացության, իր աշխատության: ... Այս օրինավոր պահանջներուն հետ կիափաքի ալ, որ հաստատուն պահն յուր ազգային ինքնությունը, իր լեզուն ու իր գրականությունը»¹⁹:

1956 թվին, երբ Կիլիկիոն նոր այսուական իր ընտրությունն անմիջապես ետք գործուելության կենսարկեր, հարց ծագեցավ, թե ընտրյալ մը իրավունք ունե՞ր իրը կաթողիկոս շարժելու: Այս խնդրին պատասխանն ու ճշշտ լուծումը մենք գտամք Ազգապատումի մեջ: Օրմանյան խոսելով Հովհաննի Սրբությանի մասին, որ կաթողիկոս ընտրված էր, սակայն մահացած օժում ստանալու առաջ, կրու: «Այսպահ ճիզերե եռք՝ ձրգությունն լրում իրեն պակեցավ, զի

յուր անոնք չենք կրնար անցընել կաթողիկոսաց շարքին մեջ, և ուկ ընտրվածները, ստանց մյուսունի նվիրագործման և առանց օժումի, կաթողիկոս չենք կրնար հունական: ... Ըստրյալը օծալ մը չէ, և օծալ չեղողը կաթողիկոս չէ. այս է մենք եկեղեցվոյն կանոնը և Մաշտոցին կանոնական կարգադրությունը: Ունակը ստիր են անվանելու անվանելու մեջ չենք չենք ուզեր հաստատուն կանոններն են շենիլ և ընտրյալ Հովհաննի Հովհաննի կրտությունը ճանաչեալ, ինչպես որ նշանված քը՝ պատկան չենք ընդունեիր»²⁰: Գետրգ Մեսրոպ Վերոպ²¹ և Մեսրոպ Վերոպ²² հետևելով Օրմանյանի կաթողիկոսաց շարքն դուրս թողած են Արդությանը:

Ազգապատում հայ եկեղեցագիտության համանակագիտարան մըն է, որ օգնության կարող է փութալ պատմությամբ հետաքրքիլ անձներու կամ բանասերներու, եթե անոնք պատմական և կամ կանոնական խնդիրներ ունին ճշտելիք:

Ժամանակագրությունը

Ժամանակագրությունը խարիսխն է պատմության, և պատմությունը ճիշտ չէ առանց ժամանակագրության: Օրմանյան իր երկասիրությանց մեջ առաջնորդ ունենալով այս սկզբունքը, մեծ կարևորություն ընձայած է ժամանակագրության, և դեպքերը պատմելու ատեն ճշդած է անոնց թվականները: Հայոց պատմությամբ առավել կամ նվազ շափով հետաքրքրված անձինք գիտեն, թե որքան հասն են ու թերի մեր ինին պատմագիրքերու ժամանակագրական տվյալները, և թե որքան ճիզ, պատրաստություն և աղյուր յուր ունենալու է հետինակ մը հաղթահարելու համար դժվարությունները:

Օրմանյան հայկական պատմության ժամանակագրությունը ճշդությամբ վերականգնելու աշխատանքին մեջ օգտագործած է հայ և օտար մատնեագիրներու պատմություններն ու քրոնիկները, և իր ժամանակին ծանոթ քննական ուսումնասիրությունները: Աղբյուրներու կողքին ան նկատի առած է հայոց ինին շարժական սումարը, ինչպես և պարսկական և լիւանական (հիճրի) տոմարական դրությունները: Հատկանելու հայկական ստոմարի մասնագետ մը լինելով, և աղյուսակներ կազմած ունենալով, հաջողած է

¹⁶ Ազգապատում, էջ 33 հմմտ. Հայոց եկեղեցին, էջ 3—5:

¹⁷ Ազգապատում, էջ 2102—2103:

¹⁸ Կարդա Ազգապատում, էջ 1948—1950 և 5058—5066:

¹⁹ Հայոց եկեղեցին, էջ 195:

²⁰ Ազգապատում, էջ 3278:

²¹ Գետրգ Մեսրոպ, Պատմություն հայ եկեղեցվոյն, Խթանըրու, Բ, 1914, էջ 455, 459—460 և 572:

²² Մեսրոպ Վ. Գ. Գրիգորյան, Պատմություն հայ եկեղեցին, Պեյրութ, 1957, էջ 202:

բազմաթիվ թվականներ ճշդորոշել և անհիշատակ ամսաթվեր երևան հանել: Դեպքերը դատելու և իրադարձությունները կապացելու յուր իմացական կարողությունն այ օժանդակ եղած է, որ ճիշդ եզրակացություններու համար՝ հակասական վկայություններու պարագային: Որպեսզի լոկ խոսքեր ըսած չըլլամ և բացարձություններու օրինակներու հաստատեմ, այստեղ կփափաքիմ ներկայացնել կարգ մը ժամանակագրական հարցեր և անոնց լուծումները, գորս տված է Օրմանյան:

— Հովհաննես Ա. Մանդակունիի կաթողիկոսության շրջանին համար պատմագիրներ և ցուցակագիրներ երկու տարրեր հաշիվներ կուտան, ոմանք 6 և այլք 12: «Քանի որ այդ երկու թիվերը անպայլակ կերպով կերկնվին ընդհանրապես,— կգրե Օրմանյան,— հինար չէ ո՞չ պատմական սխալանաց և ո՞չ թվանշան տառերու հնանության վերագրել այդ տարրերությունը, և ո՞չ այ հինար է մին մյուսին զոհելով մեկ կողմ թողող»²³: Ուստի կեզրակացնեն, թե Մանդակունի գահակալած է 12 տարի, բայց երկու շրջաններու մեջ. ա) Վեց տարի Վահանանց շարժումի դնարացքին (478—484), և բ) Վեց տարի այ խաղաղության հաստատելեն (484—485) ետք (մինչև 490), «երբ իրեն ալ կաթողիկոսությունը պաշտոնական զորություն ստացավ պետական վավերացմամբ»²⁴:

— Բարգեն Ա. Որմսեցիի գահակալության տևողությունը առհասարակ 5 կամ 6 տարի հշանակալած է մատենագիրներեն: Ասոր հայուրդին (Հովհաննես Մանդակունի, 478—490) և հաշորդին (Սամվել Արծկեցի, 516—526) միջև սակայն 26 տարիներու ժամանակամիջոց մը կա: Օրմանյան տվյալ 26 տարիները իրավունքով կվերագրե Որմսեցիի և իր տևողությունը կհաստատե Թողք հայոց ի Պարս գրությամբ, որ ամ հիշված է 506 թվին, «ութևտասաններորդ ամի Կատատա արքայից արքայի»²⁵ և ավելի ուշ²⁶: Պատմիշներու վկայությանց և իր եզրակացության տարրերությունն ալ, մեծ պատմաբանը կրացարեն հետևալ սրամիտ դիտողությամբ. «Եթե ներյալ է ենթադրական մեկնաբանություն մը տալ տարօրինակ տարրերության, պիտի ըսենք թե թվատառով գրված հ՛ջ կամ հ՛ջ թվականներուն մեջ

թվանշան «Ե» տառը նախորդի ի տառի փոխականությունը գրչագիրներու ձեռքին տակ աղավաղված է և միայն «Ե» կամ «Զ» տառերը իբր թվանշան մնացած են, և այնպես ալ մեկնեն մյուսին անցած են»²⁷:

— Հայ եկեղեցվո մեծագույն վարդապետներն Գրիգոր Տաթևացիի վախճանման ամիսն ու օրը հաղորդված չեն, այլ միայն Սեծոփեցին ուված է՝ «յատը տօնի նախավկացին Ստեփանոսի մեծի առաքելու»²⁸: Ստեփանոսի տոնին դեկտեմբերի մեջ լինելը պարզ է. բայց ինչ որ կարևոր է, Օրմանյան ճշդած է, թե 1410—11 թվականին երբ վախճանեցավ Տաթևացին, այդ տոնը հանդիպած է դեկտեմբերի 25-ին կամ հայկական սումարով՝ 860 Նավասարդի 17-ին²⁹:

— Գրիգոր ԺԱ. Բյուզանդացի կաթողիկոսի օրով պատմահած է ովերորդ ծովագատիկը: Եղիսա արեղա Ձերմուկցի զայս կնշանակե 1540 թվին³⁰: Ըստ Օրմանյանի, ամեն հինգ հարյուրակի մեջ միայն չորս անգամ ծովագատիկ կհանդիպեր, 95 տարիներու հեռավորությամբ, և հետևող 247 տարիներու ժամանակամիջոցը կանցներ առանց ծովագատիկի: Այս հիման վրա մեծ պատմաբանը կեզրակացնեն, թե խնդրու տարրեա ծովագատիկը պատմահած է 1539-ին, նախորդը՝ 1292 թվին տեղի ունեցած վլալով³¹:

Կհոսամ հիշյալ օրինակները բավական են՝ գաղափար մը տալու ի մասին Օրմանյանի կատարած հսկա աշխատանքին, համանակագրության վերա: Ընթերցողը պատկերացնելու է, թե նա որքան թվականներ որոշած է ճարտարորդեն, և առաջին անգամ լինելով մշակած հայ ծողովուրդի և հատկապես հայ եկեղեցվո պատմության մեծավ մասամբ ճիշդ ու ամբողջական ժամանակագրությունը: Ահա թե ինչո՞ւ Հրաչյա Անառյան իր կրթողական գործերն ամին՝ Հայոց անձնանունների բառարանը, հիմնած է Օրմանյանի թվականներուն վրա: Լսենք այս մեծահամբավ բանասերին կարծիքը.

«Պատմությունը առանց ժամանակակրության արժեք չունի. այս պատճառով հատուկ ուշադրություն եմ դարձել թվա-

²³ Ազգապատում, էջ 474—75:

²⁴ Նոյն անո, էջ 475:

²⁵ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 42, և Ազգապատում, էջ 489:

²⁶ Գիրք թղթոց, էջ 48, և Ազգապատում, էջ 489:

²⁷ Ազգապատում, էջ 490:

²⁸ Թովմա վրդ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանգամուրայ և լաշորդաց հիուց, Փարիզ, 1860, էջ 60:

²⁹ Ազգապատում, էջ 2027:

³⁰ Գարեգին վրդ. Մրվանձարանց, Թորոս աղբար, Խթանուու, 1879, Բ, էջ 454:

³¹ Ազգապատում, էջ 2233—34:

կանոների ճշգրտյան: Հայոց պատմության ժամանակագրությունը կատարյալ ճշդությամբ ծանութ չէ մեզ: Չամչյանի տված թվականները վերջանական չեն. իսկ Հայկազանց շրջանի թվականները, ինչպես սպասելի էր, առավելական են: Լավագույն աղբյուրը հայոց պատմության թվականների մասին՝ Օրմանյանի Ազգապատումն է: Այս հեղինակը աշխատել է պատմիչների տված թվականները ոչ միայն պատմական ու մատենագրական, այլև տոնական ու տոմարական հաշիվներով է ստուգել, և տվել է ամենաճիշտ թվականները: Ես էլ ընդհանրապես հետևել եմ ըրան: Ըստերցողը իմ գորքի մեջ շարունակ պիտի տեսնի չակերտի մեջ դրված թվականները. այդ բոլորը Օրմանյանից է վերցրած: Իսկ որ որ չակերտ չկա, որիշ աղբյուրից է և կամ ուղղակի բնագիր հիշատակարաններից³²:

Աճառյան միակ հիացողն ու գնահատողը չէ Ազգապատումի թվականներուն: Սրտասիմանի և հայրենիքի ուսումնակերպերը առանձարակ օգտագործած են ու կօգտագործեն հայոց պատմության սույն համանագիտարանը: Հակոբ Մանանդյան այսպես կարտահայտվի Հանդես ամսօրյափական գրության մասին, «Հայ Արշակունիների ժամանակագրության մասին ուշագրակ է և արժեքավոր Մ. Օրմանյանի կարևոր հոդվածը՝ «Տրդատե Արտաշեն ժամանակագրական դիտողություններ»»³³:

Անշուշու անհերետություն պիտի ըլլա ըստելն, թե Օրմանյանի թվականները անթերի են կամ կատարյալ: Հայոտ է, թե ամեն ազգի պատմությունը վիրավոր է ժամանակագրական շփոթություններով ու անորոշություններով, և պարզ է, որ պատմագիտական գործեր ընդհանրապես կունենան սրբագրելի մասեր՝ ըստ նորագոյն հայտնությանց: Հետևաբար Հայոց եկեղեցին և Ազգապատումի մեջ այ բնականորեն կամ անծանության: Հարկ է նաև ավելացնել, թե պարսից, արաբներու, մոնղոլներու

և այլ ժողովուրդներու պատմության վերաբերյալ ժամանակագրական սխազները ճակառագրական չեն և դրանք կճշգրին: Օրմանյան իր ատենին ամենին չեր կարող ընել: Արժեքավորն ու մնացունը անոր գործին մեջ բուն իսկ ազգային պատմության թվականներու վերականգնումն է, ինչ որ գիտականության և ամրողականության տեսակետներեւ անենախընթաց էր և այսօր այ դեռ կմնա անգերազան:

Վերատեսության հարցը

Ազգապատումը որքան այ գիտական գործ, իբր ընդարձակ պատմագիրը մը զերծ չէ թերիներէ: Նախ, հեղինակը իւաներուի հայոց պատրիարքության մասին գրելու ատեն կարելիթյունը չէ ունեցած օգտվելու հայլական և թրչական արխիվներէ: Մինչ Երտսաղեամի պատմությունը ճնշացուցած է տեղվոյն դիվանական թուղթներու փաստերով: Եվ երկրորդ, Ազգապատումի հրատարակութեան եւր հայտնված են նոր աղբյուրներ և գրված նոր ուսումնասիրությունները: Օրմանյան ինք այ ատենին համաձայնություն ու փափաք հայտնած է որ իր աշխատությունը երկրորդ տպագրությամբ մը կատարելագործվի³⁴:

1958-ին, երբ պր. Տաճատ Սրապյան կենուարկեր Ազգապատումի Բ տպագրության, կազմվեցավ գիտական հանձնախումը մը (Շանէ վրդ. Ամենյան, Սիմոնյան և Մեսրոպ վ. Գ. Գրիգորյան), որ պիտի գրադեր վերատեսության հարցով: Հանձնախումը թղթակցիթյամբ խնդրեց կարծիքը Հայաստանի և արտասիմանի կարևոր բանակերներու: «Գիտականներու թեկադրությանց գլխավոր կետերն էին. ա) Անխախտ ու ամրող պահել Ազգապատումի բնագիրը. բ) սակայն անպայման լրացումներ կատարել ծանոթագրություններով: Այս տեսակետը շեշտեցին հայրենի պատմաբները՝ Մատենադարանի տեսուչ դր. Լևոն Խաչկրյանի համակին միջոցավ: Հանձնախումը, համաձայն եղած՝ և առաջարկություններուն, որոշեց հայպահտական պատմա-մատենագրական նորությունները համատեղել յուրաքանչյուր հատորիկի վերափորության: Մեսրոպ վրդ. պիտի գրել առաջին 700 տարիներու պատմության վերաբերյալ ծանոթությունները. 700—1400 թթ. մասին հավելումները պիտի մշակեր Շանէ վարդապետ. իսկ Սիմոն Սիմոնյան 1400—1910

³² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, Ա, 1942, էջ X:

³³ Մ. Ա. Օ. «Տրդատե Արտաշեն ժամանակագրական դիտություններ», Հանդես Ամսօրյա, 1909, թ. 7 և 8, էջ 197—201 և 241—246:

³⁴ Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովուրդի պատմության, Երևան, Բ, մասն Ա, 1957, էջ 156:

³⁵ Ազգապատում, էջ 12—13:

շրջանի ծանոթագրությունները պիտի պատրաստեր: Դժբախտաբար խզս նրագըրին առաջին մասը միայն կարելի եղավ իրագործել, որովհետև Ծահե վարդապետ Երոսաղեմի գործերով կանվեցավ, արև. Սիմոնյան տպարան Սևանի ծանր բնուան տակ կրած՝ ազատ ժամանակ չորցավ ո: Անենալ, իսկ Մեսրոպ Վրդ. այ ուսումնական պատճառով մեկնեցավ Անգրդիա: Համեմայն դեպս, անկախաբար Ակամ Բ տպագրութենեն, դեռևս կարելի Է՝ ա) Առանձին գիրքի մը մեջ նոր ու ամբողջական ծանոթություններ խմբագրել. թ) 1910—1960 թվականներու եկեղեցական պատմությունը գրել և գ) Հասուկ անոններու ցանկեր ավելացնել³⁶:

³⁶ 1962 թվի հոկտեմբերին Լու-Անճելսի և Հակոբ եկեղեցի հոգևոր հովիվ տ. Տիրայր Վրդ. Տերվիշյան Երևանի մեջ ինձ հայտնեց, թե ինք պատրաստ է Ազգապատումի անձնանուններու և տեղանուններու ցանկերը:

Որպես եզրակացություն

Ինչպես ի հառաջագունե հայտարարեցի, ներկա հոդվածը նախափորձ մըն է գծագրելու Օրմանյանի դեմքը իր պատմաբան: Բնականորեն կարելի է երբեմն համաձայն չոլլալ իր դասումներուն, սակայն կարելի չէ ուրանալ իր պատմագիտական մեծ վաստակը: Այս իսկական հայրենասերը, այս դիվանագետը պատրիարքը և այս մեծ պատմաբանը շատ գրել տված է իր մասին, և հետ այսորիկ այ դեռ գրել պիտի տա իր բացակայության: Օրմանյանի կյանքը կամ ուղղությունը դատելն այլոց թողլով, ես այստեղ կուզեմ արձանագրել, որ անոր Ազգապատումը իր փաստական նյութերով հագեցված, գիտական մեթոդով մշակյալ և ուղիղ դասողությամբ գրված ընդարձակ հայոց պատմություն մը, անմոռաց երախտիք մը պիտի մնա հայ պատմագրության մեջ:



ՀԱՅՐԵՆԱՎԵՐ, ՀԱՅՐԵՆԱՇՈՒՉ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Ուաֆայել Խորայելյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Նախորդ ամսին Սովետական Հայաստանի ճարտարապետական հասարակայնությունը նշեց իր ջահակիրներից մեկի՝ Ուաֆայել Խորայելյանի բեղմնավոր կյանքի կարևոր տարինարձը։ Չերմ ու խանդավառ երեկո, անկեղծ մթնոլորտ։ Դրվատանքի շատ խոսքեր հնչեցին այնօր հորեղարի հասցեին ճարտարապետի տաճ դաჩիճում, որը չկարողացավ տեղավորել Ուաֆայել Խորայելյանի վաստակը գնահատող բոլոր մարդկանց։


Ծովայլ, բայց ճշմարիտ էին գնահատականները, որովհետև շոայլ է հորեղարի տաղանդն ու վաստակը։

Ավելի քան երեսուն տարի նա իր արվեստով ճառապյուն է հարազատ ժողովրդին։ Ծառայում է ազնվորեն, կրքով ու նվիրվածությամբ։ Որովհետև հստակորեն գիտակցում է այդ արվեստի վերափոխիչ դերը լուսավոր օրերի հասած իր ժողովրդի լայնքում։

Փոքր-ինչ վարանոտ, սակայն նպատակալաց էին նոր ստացին բայլերը նախապատերազման տարիներին։ Հարելով սովետահայ ճարտարապետության հիմնադիր մեծ Թամանեանի դպրոցին, սկսնակ ճարտարապետը առաջին իսկ գործերում հանդես բերեց իմքնուրուց վերաբերմունք այն հարուստ շտեմարանի՝ հայկական ճարտարապետության գանձարանի նկատմամբ, որը նշված տարիներին ներշնչման աղբյուր էր հանդիսանում սովետահայ ճարտարապետներից շատերի համար։ Հավատարիմ մնալ նախնյաց հարուստ ավանդներին, զարգացնել ու նոր մակարդակի հասցնել դրանք, առանց կաշկանդվելու այդ ավանդներով, այլ ստեղծագործորեն վերահմատավորել ազգային ճարտարապետության լավագույն մարդկանց։

և առաջադիմական ավանդները՝ դարձալ Ուաֆայել Խորայելյանի հավատամքը։ Եթե մեր որոշ ճարտարապետները ունենալով միևնույն մեկնակետոր մեացին գերի հնի ճի-ուաններում, Ուաֆայել Խորայելյանը մեկը մյուս հետևից երկնում է գործեր, որոնց վրա պարզորդ դրոշմված է ազգային ճարտարապետության ոգին՝ մեկնարամնված իր սեփական ստեղծագործության բովով, թարմաշունչ և արդիական։ Այդ սկզբունքով են հորինված նոր գործերից շատերը։ Հիշատակենք «Արարատ» տրեսոյի գինեգործառանի շենքը, բազմաթիվ աղբյուր-հուշարձանները (որոնք իր նախաձեռնությամբ կառուցվեցին Հայաստանի բազմաթիվ գյուղերում հավերժացնելով համար Հայրենական պատերազմում զրիված հայ մարտիկների հիշատակը), նոյն պատերազմում հայ ժողովրդի մասնակցությունը պանծացնող «Հայթանակ» մննումենուում (որի համար ինքը և քանդակագործ Ս. Մերկուրովը արժանացան պետական մրցանակի), «Արագի» և «Ծովինար» ուստորանները (առաջինը՝ Երևանում, երկրորդը՝ Հրազդանում), Փիզիկայի ինստիտուտի գիտա-հետազոտական լաբորատորիաների շենքերը (Նոր Ամերիկում և Արագած լեռնան կատարին) և այլն։

Նա ստեղծագործում է անհատապես և հեղինակային կոլեկտիվի հետ՝ համագործակցելով ճարտարապետներին ու քանդակագործներին։ Անդրանիկ փորձն այդ ուղղությամբ դեռ նախապատերազման տարիներին հանդիսացել է «Արարատ» տրեսոյի գինու մատանների առաջին հերթը (նախագծված ճարտ)։ Գևորգ Քոչարի հետո, լեռնային լոկանիկուում հայրակացարանի ու բնակելի տունը (ճարտ)։ Լևոն Բարյանի



Մայր տաճար. Ալվագ սեղան

թեսու): Պրոֆ. Ս. Սաֆարյանի կողմից գլխավորած հեղինակային մի խմբի հետ Ռաֆայել Խորայելյանը մասնակցեց մայրաքաղաքի գլխավոր հասարակական կենտրոն Լենինի հրապարակի կառուցապատման պատվարեր աշխատանքին, նախագծելով մի խոշոր վարչական շենքը (Կառավարության տան նանդիպակաց կողմում), իսկ ինձ. Գ. Եղյանի հետ՝ ջրանցույցի նախագծմանը, որ կառուցվեց Հրազդանի կիրճում: Նույնպիսի

համագործակցության արդյունք է Օշականի գինեգործարանի շենքը, հուշապուները Զվարթնոցի (քանդ. Երվանդ Քոչարի հետ) և Գեղարդավանքի (քանդ. Արա Հարույունյանի հետ) ճանապարհներին, մայրաքաղաքի արևմտյան և հյուսիսային «դարպասները» (նոյնպես քանդ. Արա Հարույունյանի հետ):

Ռաֆայել Խորայելյանը վարպետորեն է տիրապետում մեր ավանդական շինանյու-

